1915 թ. ցրտաշունչ գարնանը ծնապատ Անատոլիայում մահաբեր հողմը հայրենի հողից քշում էր հայկական օջախները՝ մաքրելով տարածքը ապագա թուրքական ազգ-պետության համար: Ոչ թե բնությունը, այլ իշխանությունն էր «օդ մատակարարում» հանցագործ մեքենային: Հեռացող Օսմանյան կայսրության կողմից նախաձեռնած այս ոճրագործությունում դերերը անդառնալիորեն բաժանված էին. զոհերը հայերն էին, նաև այլ քրիստոնյա փոքրամասնությունները: Չարագործության անմիջական կատարողները թուրքերից և քրդերից կազմված հրոսակախմբերն էին, ցանկության դեպքում ամբոխը նույնպես կարող էր միանալ նրանց: Մյուսները վկաներ էին՝ կամա, թե ակամա, կարեկցող, թե անտարբեր: Միջազգային հանրույթի ներկայացուցիչները նույնպես ունեին իրենց «մասնակցությունը». ոմանք օգնում ու փրկում էին զոհերին, ոմանք աղերսանքներ էին ուղարկում աշխարհին, ոմանք պատմության համար փաստագրում էին հրեշավոր հանցագործության ընթացքը: Բոլոր դերակատարների պատմական հիշողությունը պահպանել է այդ ժամանակահատվածի էջերը: Դրա առյուծի բաժինը, անշուշտ, զոհի կոլեկտիվ հիշողության մեջ է, նաև բազմաթիվ նյութական ապացույցներում, փաստաթղթերում, հաշվետվություններում, հոչակագրերում, մակագրերում... Տարբեր երկրներ ու միջազգային կազմակերպություններ իրենց ինստիտուցիոնալ հիշողության մեջ նույնպես պահպանել են զանգվածային այդ հանցագործության առանցքային պահերը: Սակայն ցեղասպանության մասին հիշողությունը պետք է պահպանվեր նաև ցեղասպանության նախազոհողների և իրականացնողների կողմից: Այն մասին, թե ինչ է պահպանվել կայսրության հիշողության մեջ, վկայում են օսմանյան արխիվները: Որքանո՞վ են դրանք ճշմարիտ և հասանելի՝ թողնենք մասնագետների դատին: Սակայն այն

* Հոդվածի ռուսերեն տարբերակը տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (2011, թ. 133.5):

մասին, թե ինչ է թողել կայսրությունը իր ժառանգին՝ ժամանակակից Թուրքիային, կարող են կարծիք կազմել նաև նրանք, ովքեր վերլուծում են այդ երկրի վարքն ու քաղաքական այրերի հայտարարությունները:

Հայերի համար 1915 թ. ցրտաշունչ գարունը չդարձավ անցյալ: Այն մնաց որպես հայրենիքի կորստի, աշխարհով մեկ ցրվածության, զոհի կերպարի մեջ պարփակվածության, կորցրածի համար ողբի ու դառը վշտի իրականություն: Ողբերգությանը հաջորդած դարը նվիրված էր գոյատևման և ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարին: 1.5 մլն. անմեղ մարդու կյանք խլած ողբերգությունից հետո հայերը փորձում էին գոյատևել և պահպանել ազգը: 1920-ականներին հայ կանայք ծնելիության մակարդակը հասցրին 56 պրոմիլի, այսինքն՝ կենսաբանական օպտիմումի: Ժողովրդագրական փոխհատուցումը ուղեկցվում էր մշակութային գենոֆոնդի վերարտադրությամբ: Սփյուռքի օջախներում հայերին հաջողվեց գտնել մշակույթի՝ հավատի, ու լեզվի պահպանման բանաձևը: Ազգը գոյատևեց և ապրեց նաև զոհվածների և կորցրած հայրենիքի մասին հիշողության հավերժացման շնորհիվ: Մեծ դեր ունեցավ ցեղասպանության ճանաչման գործընթացը, որը սկզբնական շրջանում դրսևորվեց նախ մեղավորներին մահապատժի ենթարկելու ձևով: Մահապատիժը իրականացրեցին հայ վրիժառուները, ովքեր սպանեցին այդ հրեշավոր ոճիրը նախագծող և իրականացնող ակնառու դեմքերին: Սակայն Մեծ Եղեռնի համար հիմնական պատասխանատուն պետությունն էր, ով այդ հանցանքը կատարեց իր ազգային խնդիրները լուծելու համար: Այս իսկ պատճառով առաջնային դարձավ ցեղասպանության ճանաչումը, քանզի առանց հանցագործության հստակ որակավորման հնարավոր չէր հանցագործի՝ թուրքական պետության պատժումը:

Հայտնի է, որ Մեծ Եղեռնի պաշտոնական ճամաչման սկիզբը դրվեց 1915 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հայտնի հռչակագրով¹: Դրանում թուրքական պետության ոճիրը հայերի նկատմամբ որակվեց որպես ցեղասպանություն և «հանցագործություն մարդկության դեմ»: Բացի դրանից՝ առաջ քաշվեց ոճրի կազմակերպիչներին ու իրականացնողներին, այդ թվում նաև պետա-

¹ <http://www.genocide-museum.am/eng/states.php>

կան պաշտոնյաներին, քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու պահանջը:

Այդ հռչակագրին հաջորդեցին ցեղասպանության ճանաչման տասնյակ այլ ակտեր, հրապարակված տարբեր պետությունների դատարանների և միջազգային կազմակերպությունների կողմից: Այդ գործընթացի վերլուծությունը ի հայտ է բերում հետաքրքիր օրինաչափություն՝ Մեծ Եղեռնի ճանաչումը սերտ կապի մեջ է պետականության գործոնի հետ:

Ցավոք, Հայաստանի անկախությունը ուշ վրա հասավ. առաջին հայկական հանրապետությունը շատ կարճ գոյատևեց և չէր կարող ազդել ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա: Երկրորդ հայկական հանրապետությունը ԽՍՀՄ մաս էր կազմում: Մի երկրի, որը ՄԱԿ-ում չէր քվեարկել ցեղասպանության հանցագործության կոնվենցիայի համար՝ կռահելով, որ ԽՍՀՄ-ում կատարված բազում արարքներ կարող էին, ըստ էության, որակվել որպես ցեղասպանություն: Բացի դրանից՝ ԽՍՀՄ-ը շատ մտահոգ էր Թուրքիայի հետ իր հարաբերությունները բարելավելու հարցով: Բնականաբար, ԽՍՀՄ-ը չէր ճանաչում հայերի ցեղասպանությունը և արգելում էր ցեղասպանության մասին որևէ հիշատակում, սակայն նաև չէր խոչընդոտում հայերին՝ իրենց հոգում սրբացնելու զոհի կերպարը: Հայերին թույլատրվում էր հիշել ու սգալ, ոչ ավելին: Բոլոր նրանք, ովքեր բարձրաձայնում էին ցեղասպանության մասին հետապնդվում էին ու չեզոքացվում: Այսպես ազգը զրկվեց իր հերոսներից և նրանց մեծարելու իրավունքից և պարփակվեց զոհի կերպարի մեջ, մի աշխարհում, որտեղ թուրքերը թշնամիներ էին, իսկ ռուսները՝ փրկիչներ: Այս երկբևեռ աշխարհը մինչև օրս մեզ պահում է գերության մեջ՝ սիրով դեպի փրկիչ-ռուսները և ատելությամբ՝ թշնամիները:

Այնուամենայնիվ, խորհրդային 70 տարիները մեզ համար ապարդյուն չանցան. մենք ձեռք բերեցինք պետականության փորձ և կայացանք որպես պետական ազգ: Մեզ հաջողվեց կերտել արժեքների մեր համակարգն ու ազգը, որը գիտի աշխատել, ստեղծագործել և պատերազմել²: Այդ ժամանակն ապարդյուն չանցավ նաև Մեծ Եղեռնի ճա-

² Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ հայերն ունեցել են Խորհրդային Միության հերոսների համեմատական կարգով ամենամեծ քանակը, այսինքն՝ ցույց են տվել թշնամուն դիմակայելու և պատերազմելու լուրջ կարողություն:

նաչման համար. հավաքվեցին փաստեր և ամբողջացավ խմբային հիշողությունը, առանձին դրվագներից վերստեղծվեց հրեշավոր հանցագործության ամբողջական պատկերը, ձևավորվեց լուրջ տեղեկատվական հենք ցեղասպանության ճանաչման պայքարի համար: Մեծ ջանքեր գործադրվեցին անմեղ զոհերի հիշատակը հավերժացնելու և հիշատակի սգո օրեր սահմանելու համար այն երկրներում, որտեղ ապրում են հայերը: Կոլեկտիվ հիշողության պահպանմանը նպաստեց նաև կորցրած հայրենիքի տեղանունների վերարտադրությունը բնակության նոր վայրերում:

Մեծ Եղեռնի ճանաչմանն ուղղված պայքարը նոր թափ ստացավ 1965 թվականին, երբ հաջողվեց վերջապես պաշտոնապես նշել ողբերգության կեսդարյա տարելիցը և Երևանում կանգնեցնել զոհերի հուշարձանը:

Մեծ Եղեռնի ճանաչման համար պայքարի ակտիվացման հաջորդ ալիքը կապված է ՀՀ անկախացման հետ: 1991 թ. Հայաստանի Հանրապետությունը ցեղասպանության ճանաչումը հայտարարեց առաջնահերթ նպատակ: Իսկ անկախության հռչակագիրն³ այն հռչակեց որպես պետական քաղաքականության կարևոր հիմնախնդիր: Կարևորություն հաղորդելը ինքնին ակտիվացրեց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Սակայն շուտով Թուրքիայի ճնշումը ստիպեց Հայաստանի իշխանությանը հասկանալ, որ անհնար է ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարը համատեղել պետականության կառուցման և Լեռնային Ղարաբաղում ազգային ազատագրման պայքարի հետ: Եվ իշխանությունները գնացին սփյուռքի հետ աշխատանքի բաժանման. սփյուռքը ներկայացվեց որպես ցեղասպանության ճանաչման սուբյեկտ: Ռազմավարական այդ քայլը մի կողմից նպաստեց ցեղասպանության ճանաչման պայքարի ակտիվացմանը, մյուս կողմից էլ հեշտացրեց անկախ պետականության կայացման գործընթացը: Սփյուռքը ակտիվորեն անցավ գործի, ինչը տվեց զգալի արդյունքներ. երկու տասնյակից ավելի երկրներ Մեծ Եղեռնը ճանաչեցին որպես ցեղասպանություն: Սփյուռքը նախաձեռնեց ցեղասպանության զոհերի կորուստների փոխհատուցման պահանջ և շահեց մի շարք դատական պրոցեսներ Թուրքիայի դեմ:

³ <http://www.gov.am/am/independence/>

Շատ չանցած Հայաստանի իշխանությունները ցեղասպանության ճանաչման պահանջը օգտագործեցին որպես Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց՝ նպատակ ունենալով փոխել վերջինիս դիրքորոշումը դարաբաղյան հարցի կարգավորման գործընթացում: Ավելին, Հայաստանի իշխանությունները Եվրամիությանը թույլ տվեցին այդ գործիքն օգտագործել Թուրքիայի հավակնությունները զսպելու համար:

Ցեղասպանության ճանաչման պահանջի գործիքայնացումը դանդաղեցրեց Մեծ Եղեռնի ճանաչման գործընթացը: Հատկանշական է, որ 2008-2009 թվականներին ոչ մի երկիր չի ճանաչել այդ ցեղասպանությունը: Սակայն 2011 թվականին նկատվեց նոր շրջադարձ: Արգենտինայի դաշնային դատարանը Գրիգոր Հայրապետյանի հայցի հիման վրա որոշում կայացրեց Թուրքիային պատասխանատու ճանաչել Սվասի և Խարբերդի վիլայեթներում ցեղասպանության ժամանակ Հայրապետյանի անհայտ կորած 50 հարազատների ճակատագրի համար: Փաստաթղթերի տասնմեկ-ամյա ուսումնասիրությունից հետո Արգենտինայի դաշնային դատարանը Թուրքիային մեղադրեց այն բանում, որ 1915 թ. այդ երկիրը գիտակցված և սխտեմատիկ կերպով իրականացրել է հայերի ոչնչացման քաղաքականություն: Արգենտինայի դաշնային դատարանի վճռով ամբողջացվեց ցեղասպանության հանցագործության համար դատական հետապնդման մեկդարյա շրջանը, որի սկիզբը դրվել էր 1919 թ. հունիսի 26-ին Թուրքիայի ռազմական տրիբունալի կողմից:

1919 թվականին, Թուրքիայի նոր իշխանությունը, Ահմեդ Իզզեթ փաշայի գլխավորությամբ, ձերբազատվելով երիտթուրքերի ռեժիմից և ցանկանալով խուսափել Անտանտայի երկրների սանկցիաներից, Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ ներքաշելու և հայերի զանգվածային կոտորածը կազմակերպելու համար զինվորական դատարանի առջև կանգնեցրեց երիտթուրքական կառավարության ղեկավարներին ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության բարձրաստիճան անդամներին: Դատարանի առջև կանգնեցին կուսակցական պաշտոնյաներ, նախարարներ, զինվորականներ և անձինք, ովքեր մասնակցել էին հանցագործությանը: Դատապարտվեց 31 մեղադրյալ, նրացից տասնմեկը՝ հեռակա կարգով: Չորս հանցագործ դատապարտվեց մահվան, իսկ մնացածները՝ ազատազրկման: Այդպի-

սով, զինվորական տրիբունալը թարմ հետքերով ընդունեց ցեղասպանության հանցագործությունը: Սակայն, լուծելով իրավիճակային խնդիր, զինվորական տրիբունալը գործը ավարտին չհասցրեց: Ցեղասպանության հանցագործության մեջ մեղադրված երիտթուրքական գործիչների զգալի մասը հետագայում հայտնվեց Քեմալ Աթաթուրքի կողքին և հանրապետական Թուրքիայում զբաղեցրեց կարևորագույն պաշտոններ: Ահա թե ինչու զինվորական տրիբունալի որոշումը հանդիսանում է նշաձող նաև ցեղասպանության ուրացման ասպարեզում:

Վերադառնալով Արգենտինայի դաշնային դատարանի վճռին՝ նկատենք, որ այն շեշտադրում է ցեղասպանության հանցագործության համար դատական հետապնդման ու պատժի անհրաժեշտության և անխուսափելիության գաղափարը: Այդ վճիռը վկայում է, որ հարյուր տարի անց Առաջին համաշխարհային պատերազմի գրեթե բոլոր հետևանքները հաղթահարած աշխարհը պատրաստ է շրջել հայոց Մեծ Եղեռնի էջը ևս: Աշխարհը պատրաստ է դրան: Սակայն պատրաստ չէ Թուրքիան:

Թուրքիայի համար 1915 թ. ցրտաշունչ գարունը մնում է անցյալ, որը հարկավոր է մոռանալ: Թուրքիան շարունակում է ջանքեր գործադրել ցեղասպանության ժխտման համար: Բայց մենք XXI դարում ենք, իսկ Թուրքիան հավակնում է դառնալ Եվրամիության անդամ և ռեգիոնալ առաջնորդ: Թվում է, թե այս հանգամանքը պետք է խթաներ Օսմանյան կայսրության ժառանգության քննադատական վերանայումը: Սակայն նման բան տեղի չի ունենում, ավելին, ինչպես ցույց են տալիս իրադարձությունները, կայսրության կողմից կիրառվող դարձ ապրած քաղաքական տեխնոլոգիաներն ու գործիքները այսօր էլ ակտիվորեն օգտագործվում են կայսրության ժառանգորդի՝ ժամանակակից Թուրքիայի կողմից, որը բավականին հեռու է կայսրության ժառանգության քննադատական վերանայումից: Եթե ժամանակ առ ժամանակ Թուրքիան անդադարեցնում է կայսրական անցյալին, ապա միայն այդ կայսրությունը մեծարելու և նրան անփոփոխ հավատարմություն ցույց տալու նպատակով: Այս եզրահանգումը պարադոքսային է թվում, սակայն, դրա արդարացիության մեջ համոզվելու համար, բավարար է անդադարեցնել Թուրքիայի կողմից ցեղասպանության ժխտման գործընթացին: Վերջինիս վերլուծությունը ցույց է տալիս, որ երկար տարիներ Թուրքիան գտնվում էր ցեղասպանության փաստի ժխտման **առաջին**՝

պատմական ամենգիայի փուլում: Յեղասպանությունը կտրականապես հերքելու հետ մեկտեղ թուրքերը փորձում էին «մաքրել» օսմանյան արխիվները, Արևմտյան Հայաստանի տարածքում ոչնչացնել հայերի հետքերը: Այդ փուլում խոնարհվեցին հայկական եկեղեցիները, չխոնարհվածների վրայից հանվեցին խաչերը, քանդվեցին հայերի շիրմները, պատժվում էր ցեղասպանության մասին ցանկացած հիշատակում: Սակայն աշխարհը հիշում էր Մեծ եղեռնի մասին: Այդ փաստի գիտակցումը Թուրքիային ստիպեց իր ջանքերն ուղղել աշխարհում ցեղասպանության ճանաչման գործընթացի կասեցմանը: Դրանով սկիզբ դրվեց ցեղասպանության ժխտման նոր փուլի, որի նպատակն էր պատմական ամենգիան տարածել ողջ աշխարհում՝ քաղաքական, տնտեսական և դիվանագիտական ճնշման միջոցով: Նման ճնշում է գործադրվել բոլոր այն երկրների վրա, որոնցում բանավեճ է ծավալվել ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ: Բազում դեպքերից հիշատակենք ԱՄՆ-ի Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովի հիշարժան նիստը, որում լուրջ բարոյական փորձության ենթարկվեցին կոնգրեսականները, մասնավորապես նրանք, ովքեր հայտարարեցին, որ չեն կասկածում ցեղասպանության փաստին, սակայն պատրաստ չէին քվեարկել դրա ճանաչման համար՝ ելնելով երկրի քաղաքական շահերից: Խոստում էր նաև 2009 թ. աշնանը Շվեդիայում տեղի ունեցած դեպքը: Այն բանից հետո, երբ շվեդական Ռայխստագն ընդունեց հայերի, ասորիների և Պոնտոսի հույների 1915 թ. ցեղասպանությունը, Թուրքիան լուրջ բարոյա-քաղաքական ճնշումների ենթարկեց օրենսդիրներին: Գործի դրվեցին ճնշման բոլոր հնարավոր լծակները, կիրառվեց «ուժի իրավունքը», որը յուրահատուկ տեղ է զբաղեցնում ցեղասպանության ժխտման երկրորդ փուլի զինանոցում:

«Ուժի իրավունքի» կիրառման վառ օրինակ է Թուրքիայի արտաքին գործերի նախարարության վերաբերմունքը Արգենտինայի դաշնային դատարանի նկատմամբ: Դատավճռից ամիջապես հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը մեղադրեց դատարանին չհիմնավորված որոշում կայացնելու մեջ և սպառնաց, որ «այդ որոշումը կհեղինակագրկի արգենտինյան դատարանը»⁴: «Ուժի իրավունքը» կիրառվում է ոչ միայն ցեղասպանությունը ճանաչած ու ճանաչող

⁴ <http://www.genocide-museum.am/eng/14.04.2011.php>

երկրների նկատմամբ, այլև Հայաստանի: Սակայն, եթե առաջինների դեպքում ուժի կիրառումը քողարկվում է շահերի և օգուտների մասին թափանցիկ ակնարկներով, ապա Հայաստանի դեպքում «ուժի իրավունքը» ձեռք է բերում յուրահատուկ նշանակություն՝ արտահայտվելով ինչպես իր օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ ձևերով: Նշեմ, որ ժամանակակից միջազգային հարաբերությունների էթիկան բռնության շարքին է դասում «ոչ միայն այն հանցագործությունները, որոնք օբյեկտիվորեն զրկում են կյանքից, առողջությունից կամ ունեցվածքից, այլև նրանք, որոնք հանգեցնում են ինքնության քայքայմանը»: Հետևաբար, եթե հիմնվենք ժամանակակից միջազգային հարաբերությունների բարոյական վերոհիշյալ սկզբունքի վրա, ապա ուժային ճնշում են Թուրքիայի ոչ միայն այն գործողությունները, որոնք նպատակ ունեն թուլացնելու մեր պետությունը, այլև բոլոր ոտնձգությունները մեր ինքնության նկատմամբ: Ըստ իս, Թուրքիայի կողմից գործադրվող բացահայտ ուժային ճնշման հետ համակերպվելը և դա անպատասխան թողնելն առաջացնում է հեռավոր, սակայն իրական զուգահեռներ 1915 թ. ցրտաշունչ գարնան հետ...

Սակայն վերադառնանք ցեղասպանության ժխտման երկրորդ փուլին, ի մասնավորի այն ճնշմանը, որը գործադրում է Թուրքիան՝ պահանջելով չեղյալ համարել ցեղասպանության ճանաչման մասին նախկինում ընդունված որոշումները: Հատկանշական է Արգենտինայի օրինակը, որը 2007 թ. ճանաչել է ցեղասպանությունը: Որոշումը չեղյալ համարելու Թուրքիայի պարտադրանքի փորձերը միայն ամրապնդեցին ճանաչման դիրքորոշումը և վրդովեցրին արգենտինական հասարակությանը: Մինչև օրս Թուրքիայի փորձերը՝ ողջ աշխարհին ներարկել պատմական ամենեզիան, չեն հասել իրենց նպատակին. ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է: Սակայն այդ ջանքերն ու ժխտման փաստը անհետևանք չի մնում նաև թուրքական հասարակության համար: Այն ներսից քայքայում է սոցիալական համախմբվածության հիմքերը ու ձևավորում ինքնության ճգնաժամ: Վերջինիս մասին են վկայում իրենց՝ թուրքերի կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները: Դրանք փաստում են, որ երկրի բնակչության կեսն իրեն չի նույնականացնում թուրք ազգության հետ: Այլ կերպ ասած, Թուրքիայում առկա է ինքնության վերափմաստավորում: Դրանում կարևոր դեր են խաղացել այն մտավո-

րականները, ովքեր դիմել են պատմության էջերին՝ 1915-ի Մեծ Եղեռնի դեպքերը հասկանալու համար: Հասարակության վերին շերտերում ծավալված այս գործընթացը սկզբում վերնախավային էր: Բայց հետզհետե այն արձագանք ստացավ թուրք հասարակության միջին և ստորին շերտերում՝ բացահայտելով կամ հայտնաբերելով ցեղասպանության՝ նախկինում անտեսանելի զոհերին, ովքեր ճակատագրի բերումով մնացել էին Թուրքիայում: Հասարակ թուրք մարդիկ մի օր հանկարծ հայտնաբերեցին, որ իրենց տատերը, մայրերը և կամ այլ մոտ բարեկամները պատկանում են այլ, ծայրայլ հավատի և ազգության⁵:

Թուրքական հասարակության մեջ ինքնության վերաիմաստավորումն այսօր ուժգնանում է սոցիալական շարժումների ձևով, որոնք սկիզբ են առնում ցեղասպանությունից: Մասնավորապես խոսքը իսլամացված հայերի շարժման մասին է, ովքեր, հայտնաբերելով իրենց իրական էթնիկությունը, դիմում են դատարաններ՝ պահանջելով վերադարձնել իրենց անունները և փոխել կրոնը: Թուրքական մամուլի փաստամամբ, իսլամացված հայերի շարժումը ձեռք է բերում ուժ և ինստիտուցիոնալ այնպիսի ձևեր, ինչպիսին է, օրինակ, դերսիմ-հայերի միությունը⁶: Ստացվում է, որ չճանաչված ցեղասպանությունը ճեղքում է թուրք հասարակությունը և ինքնությունը: Այն արդեն մարդկանց մոտ կասկած է սերմանել առ այն, որ հեռավոր 1915-ին ինչ-որ բան այնուամենայնիվ տեղի է ունեցել... Կարելի է կանխատեսել, որ շուտով կինչի նաև այն հարցը, թե «կոնկրետ ի՞նչ է տեղի ունեցել»: Հրանտ Դինքն իր ողբերգական մահով նպաստեց պատմական ամենեզիայի թանձր մշուշի ցրմանը: Թուրքական հասարակությունը, հաղթահարելով վախը, բարձրաձայնեց, որ Դինքի փոխարեն կգան քաղաքացիների նոր սերունդներ, որոնք կցանկանան իմանալ պատմական ճշմարտությունը: Այսպիսով, Մեծ Եղեռնի ճանաչման միջազգային

⁵ Ինքնության ճգնաժամի վերաբերյալ ապացույցների համայնապատկերում հատկանշական են «մեղադրանքները», որոնք ուղղված են հայտնի քաղաքական և հասարակական գործիչներին. իբրև թե նրանք հայերի որդիներ են...

⁶ Դերսիմ-հայերի միությունն օգնում է իսլամացված հայերին բացահայտել իրենց իրական էթնիկությունը, սովորել լեզուն ու ծանոթանալ հայկական մշակույթին և արժեքային համակարգին: Այն գործում է Թենսիլի հայկական գավառում: Տե՛ս հարցազրույց՝ Sidar'a Yumlus'a. «I have a long way to pass in search of my identity», (http://www.armenianow.com/features/26102/islamized_hidden_armenians_turkey):

ճնշման, ինչպես նաև սեփական ներքին ազդակների ներքո հասունացող թուրք հասարակությունն անցավ Մեծ Եղեռնի ընդունման ճանապարհի իր սկզբնամասը. հաղթահարեց մոռացության փուլը և ցանկանում է իմանալ ճշմարտությունը ցեղասպանության մասին: Թուրք հասարակությունը շարժվում է իր հետագծով, որը տարբեր է իշխանությունների հետագծից: Իշխանությունները չեն շտապում ճանաչել ցեղասպանությունը՝ վախենալով ինքնության ճգնաժամի խորացումից և ենթադրելով, որ Թուրքիան այսօր պատրաստ չէ առերեսվել պատմության հետ և բարոյական գնահատական տալ մի հանցագործության, որն իրականացվել է տոտալիտար կայսրության կողմից: Թուրքիայի իշխանությունները չեն շտապում, քանի որ նրանց ժամանակ է հարկավոր, որպեսզի հասարակությանը հոգեբանորեն նախապատրաստեն անհամատեղելի պատկերները դժվարին գործին համատեղելու համար: Համաձայնենք, որ իրոք դժվար է համատեղել «հզոր» օսմանյան կայսրության կերտած լուսավոր կերպարը նրա անփառունակ գործերի դժգույն կերպարի հետ: Ի վերջո, իշխանություններին ժամանակ է հարկավոր, որպեսզի ստեղծվեն նոր առասպելներ հների փոխարեն: Այս նպատակով Թուրքիան հետաձգում է ցեղասպանության ճանաչումը և բացում է ժխտման գործընթացի նոր փուլ:

Ցեղասպանության ժխտման տրամաբանության և փաստարկման վերլուծությունը ցույց է տալիս, որ Թուրքիան արդեն թևափոխել է ժխտման նոր՝ երրորդ փուլը, որում հիմնական զենքը փաստերի և թվերի նենգափոխումն է լինելու: Սոցիոլոգիապես ամեն ինչ ճիշտ է. Թուրքիան հաղթահարել է պատմական ամենեզիայի և ցեղասպանությունը կտրականապես ժխտելու շրջանը: Դրանից հետո պետք է գար հանցագործության էության նենգափոխման փուլը: Սոցիոլոգիայի կանոններին համապատասխան, հանցագործության փաստը ժխտելուց հետո գալիս է դրա էությունը նենգափոխելու փուլը: Սա նշանակում է, որ Թուրքիան վիճարկելու է ոչ թե հանցագործության բուն փաստը, այլ դրա որակումը: Հերևաբար մենք պետք է պատրաստ լինենք, որ Թուրքիան օրերից մի օր կընդունի հայերի զանգվածային սպանությունների փաստը՝ ասելով, որ պատերազմական այն ժամա նակահատվածում իսկապես հայեր են սպանվել, սակայն դա ցեղասպանություն չէր: «Մենք պետք է հասկանանք հայերի հետ կատարվածի զգայական ասպեկտը,- հայտարարել է Թուրքիայի արտաքին գոր-

ծերի նախկին նախարար, այժմյան վարչապետ Ահմեդ Դավութթոլուն, - սակայն նրանք նույնպես պետք է հարգեն մեր անցյալը: Օսմանյան կայսրությունը ծնկի էր եկած, բոլոր կողմերում տեղի էին ունենում ցավալի իրադարձություններ: Սա վերաբերում է ոչ միայն հայերին, այլև բոլոր ազգային փոքրամասնություններին»: Կարծում եմ, այս միտքը արտասանվել է, որպեսզի կասկածի տակ դրվի հանցագործության ցեղասպան բնույթը և այն ներկայացվի իբրև պատերազմական ժամանակաշրջանի սովորական իրադարձություն: Այս նենգափոխությունն իրականացնելու համար Թուրքիան այսօր ապավինում է պատմաբանների մասնակցությանը: Սակայն, ինչպես կարծում էր հայտնի սոցիոլոգ Պիտիրիմ Սորոկինը, «ոչ թե նախնիներն են, այլ ժամանակակիցներն են պատմության լավագույն վկաներն ու դատավորները» (Сорокин, 1998, 31): 1915 թ. ողբերգության ականատեսների կողմից թողած փաստերը բավարար են, որ, ըստ «Ցեղասպանության մասին կոնվենցիայի», 1915 թ. իրադարձությունները որակվեն որպես ցեղասպանություն, և տրվի դրանց իրավական գնահատականը: Հետևաբար, եթե Թուրքիան իսկապես ցանկանում է պաշտպանել երկրի ներկայիս սերնդի՝ առանց մեղքի զգացման ապրելու իրավունքը, և ձերբազատվել հայերի և այլ քրիստոնյաների նկատմամբ կատարած հանցագործության համար կոլեկտիվ պատասխանատվությունից, պետք է դիմի ոչ թե պատմաբաններին, այլ Միջազգային դատարանին և միջազգային իրավունքի փորձագետներին: Սակայն Թուրքիան դա չի անում՝ հույս ունենալով, որ ցեղասպանությունը վերապրածների սերունդը կանցնի կգնա, ցավը կմեղմանա, ու կփակվեն դեպի զոհերի հուշարձաններ տանող արահետները: Սակայն այդ հույսերը սին են, հայերը չեն մոռանալու իրենց հայրերի ու պապերի վերապրածը, իսկ ցեղասպանության ոճրագործությունը չունի վաղեմության ժամկետ, հետևաբար Մեծ Եղեռնը որպես ցեղասպանություն ճանաչելու ժամանակը չի սպառվելու: Ժամանակն իրոք արագ է ընթանում, լրանում է Մեծ Եղեռնի հարյուրերորդ տարելիցը: Արդեն չկա պատճառ անվերջ սպասելու Թուրքիայի՝ այդ հանցագործությունն ընդունելու պատրաստակամությանը: Ստեղծված են բոլոր պայմանները, որ Մեծ Եղեռնի ճանաչումը որպես ցեղասպանություն դառնա իրականություն: Մասնավորապես,

անվրեպ կերպով գործում է «Ցեղասպանության մասին կոնվենցիան»⁷, աշխարհում կուտակվել է ցեղասպանության ճանաչման ու դրա հետևանքների հաղթահարման բավարար փորձ, փորձարկվել է կոլեկտիվ մեղքի հարցի լուծման մոդելը: 23 երկիր, 15 հեղինակավոր միջազգային կազմակերպություններ, ԱՄՆ 43 նահանգ 1915 թվականի Մեծ Եղեռնն արդեն որակել են որպես ցեղասպանություն⁸: Մեծ Եղեռնի ճանաչում են պահանջում ոչ միայն Հայաստանն ու հայկական սփյուռքը, այլև քաղաքակիրթ աշխարհը: Ճանաչման գործընթացն արդեն դուրս է եկել հայ-թուրքական հարաբերությունների շրջանակներից: Այն ամբողջությամբ տեղավորվում է ցեղասպանությունների կանխարգելմանն ու դրանց հետևանքների հաղթահարմանն ուղղված միջազգային հեղինակավոր շարժման մեջ: Ճանաչման գործընթացը սնուցվում է ոչ միայն հայկական, այլև ցեղասպանության զոհ դարձած մյուս ազգային փոքրամասնությունների էներգիայով: Սակայն Թուրքիան, հետևելով ժխտման ներկայիս փուլի տրամաբանությանը, ստեղծում է նոր առասպելներ ու նենգափոխում է փաստերը: Դրա համար ակտիվ կերպով կիրառվում է «նեոսմանիզմի» տեսությունը⁹, որը թույլ է տալիս Թուրքիային վերադառնալ հետկայսերական ինքնազմայման փուլին և ամրապնդել «հզոր անցյալի» կերպարը, որպեսզի նորովի գրվի գաղութային ժամանաշրջանի պատմությունը, և իրականացվեն կայսերական ոչ ամբողջությամբ իրականացված հավակնությունները: Մեծ Եղեռնը չի տեղավորվում այդ «նոր պատմության» էջերում: Այսօր Մեծ Եղեռնի ճանաչման գործընթացը կախված է այն բանից, թե ինչպես է ընթանում ժխտման գործընթացը, և եթե, հետևելով ժխտման ներկայիս փուլի տրամաբանությանը, Թուրքիան շարունակի նենգափոխել փաստերն ու հերքել հանցագործության էությունը, ապա մեզ ոչինչ այլ չի մնում, քան դիմել Միջազգային դատա-

⁷ http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/genocide.shtml

⁸ <http://www.genocide-museum.am/eng/states.php>

⁹ Նեոսմանական ուսմունքը, որը գաղափարախոսեցնում և հերոսացնում է կայսերական գործունեությունը, արտաքին քաղաքականության ծավալման գեղք է: Սակայն այն բազմաֆունկցիոնալ է և ծառայում է ցեղասպանության ժխտմանը, ինչպես նաև ավելի բարդ նպատակներին, մասնավորապես Եվրոպայի և Թուրքիայի միջև բարդ հարաբերությունների լուծմանը, որոնց հիմքում ընկած է լուրջ կոնֆլիկտ:

րան՝ ցեղասպանության ճանաչման հայցով: «Ցեղասպանության մասին կոնվենցիայի» IX հոդվածն ասում է. «Կողմերի միջև վեճերը տվյալ կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ իրականացման հետ կապված, ներառյալ վեճերը այս կամ այն պետության կողմից ցեղասպանության կամ III հոդվածում թվարկված այլ գործողությունների իրականացման համար պատասխանատվության ենթարկման պահանջը փոխանցվում է Միջազգային Դատարան՝ կողմերից յուրաքանչյուրի պահանջով»: Հետևաբար, ցեղասպանության ճանաչման հետագա ընթացքը և մեր գործողությունները կախված են այն բանից, թե կհասկանա՞րք Թուրքիան հայտնի ճշմարտությունը, որ պատմական անցյալն իբրև ինքնության և զարգացման աղբյուր ունի երկակի բնույթ. այն կարող է ծառայել որպես հայելի, որը լիցք է տալիս թռիչքի համար, և հակառակը՝ դառնալ թռիչքը արգելակող կապանք: Այժմ Թուրքիան փորձում է լիցք ստանալ կայսերական անցյալից՝ անտեսելով, որ չճանաչված Մեծ Եղեռնը կասեցնելու է առաջընթացն ու թռիչքը: Միայն ճշմարտության ընդունումն ու զղջումը կօգնեն Թուրքիային ձերբազատվել հանցագործության կապանքներից և պարզել թևերը: Ակնհայտ է նաև, որ ժամանակը արագ է սլանում, հայերի համբերատարությամբ ու հույսով սպասելու տարբերակը իր տեղը հետզհետև զիջում է Մեծ Եղեռնը որպես ցեղասպանություն ճանաչելու հայցով Միջազգային դատարան դիմելու թափ առնող այլընտրանքային տարբերակին: Լսվում է նաև հանրահայտ «Ի գործ» կանչի դղրդյունը:

100 տարի անց. հայոց պետականությունը
ոցիլոգիական չափումներում: Գիտ. հոդ.
Ժող., 2015, էջ 75-88

**Новые перипетии армянской миграции: кумулятивная
причинность и возможные последствия**
**Հայկական միգրացիայի նոր վայրիվերումները.
ամբողջական պատճառները և հնարավոր հետևանքները**
**New twists of Armenian migration: accumulative causation
and the possible consequences**

На протяжении последних двух десятилетий Армения перевидела все виды миграций, с их особенностями и последствиями. Чтобы представить суть, масштабы и причины миграционных потоков, вместившихся в этот исторический период, достаточно вспомнить, что за этот период в страну иммигрировали 420 тысяч беженцев из Азербайджана и других стран бывшего СССР, оказавшихся вовлеченными в вооруженные конфликты. Второй поток беженцев принес в страну десятки тысяч этнических армян из конфликтных зон Ближнего Востока. Армения оказалась свидетелем перемещения значительных масс населения: более 72 тыс. человек были перемещены во внутренние районы из пограничных районов страны¹⁰. Десятки тысяч экологических мигрантов, покинув места своего постоянного проживания после Спитакского землетрясения, переместились в иные населенные пункты страны¹¹. Активизировалась внутренняя миграция: жители горных и предгорных сел стали в массовом порядке переселяться в равнинные города и села. В то же время из страны эмигрировало по разным оценкам от 700 до 1.200 тыс. человек. Этот поток унес из Армении более миллиона вынужденных трудовых мигрантов. Таким образом, Армения на протяжении последних двух десятилетий, с одной стороны, выступала как страна-донор, поставляющая трудовых мигрантов рынкам рабочей силы различных стран, с другой – как реципиент потоков вынужденных мигрантов. Столь активные

¹⁰ См. В. Ходжабекян. Воспроизводство и перемещения населения Армении в XIX-XX веках, на пороге XXI века. Ереван. Издательство «Гителик» НАН Армении, 2002, на армянском языке.

¹¹ См. Материалы Конференции по беженцам и перемещенным лицам в СНГ. Женева, Швейцария, 30-31 мая 1996 г., а также данные Агенства по миграции при Министерстве территориального управления Республики Армения.

миграционные процессы развертывались на фоне относительно небольшой численности населения¹² значительная часть которого оказалась вовлеченной в миграционные и околومиграционные процессы, будь то в качестве непосредственных участников или реципиентов позитивных и негативных последствий миграции. Миграционные процессы изменили страну и армянское общество, превратив их в лабораторию для изучения причин и последствий миграции. Такой лабораторией естественно не могли не воспользоваться исследователи социальных процессов, рьяно взявшиеся за изучение различных аспектов проблемы миграции и посвятившие ей множество работ. В последних на основе богатого статистического материала проведен подробный анализ объемов, направлений и структуры миграционных потоков, а также обусловивших их факторов. Однако несмотря на значительное число работ, миграционные процессы в Армении продолжают оставаться не до конца изученными, в частности, не измерен потенциал миграции, не сделаны заслуживающие доверия подсчеты приобретений и потерь от миграции, не даны близкие к реальности прогнозы миграции, не воссоздана целостная картина армянского общества как миграционного. Наличие такого числа белых пятен продолжает поддерживать актуальность миграционных исследований. Данная статья также посвящена проблеме миграции. В ней прослеживаются последние перипетии армянской миграции, предлагается новое объяснение причин роста уровня наполненности ранее относительно стабильного потока вынужденных мигрантов из Армении, рассматриваются возможные последствия наблюдаемого роста.

Для анализа отмеченных аспектов проблемы миграции исходной точкой служит приведенная ниже динамика миграционных показателей (см. Таблицу 1).

¹² Согласно официальным данным переписи населения СССР 1989 года численность населения Армении на январь 1989 г. составляла 3305 тысяч. человек. – demoscope.ru/weekly/2003/0131/analit06.php

Динамика показателей миграции в Армении¹³


Таблица 1

Годы	Эмигранты (тыс. чел.)	Иммигранты (тыс. чел.)	Сальдо миграции (тыс. чел.)
2000	12	1.6	-10.4
2001	11.9	1.6	-10.3
2002	10.9	1.7	-9.2
2003	9.5	1.9	-7.6
2004	9.2	1.5	-7.7
2005	9.3	1.5	-7.8
2006	8	1.3	-6.7
2007	7.5	1.1	-6.4
2008	6.7	0.9	-5.8
2009	4.8	0.9	-3.9

Как показывают данные Таблицы, на протяжении первого десятилетия XXI века сальдо миграции в Армении продолжало оставаться стабильно минусовой величиной. Максимального значения эта величина достигла в двухтысячном году. После этого разница уехавших и приехавших в страну неуклонно уменьшалась и достигла минимального значения в 2008 году. Сегодня разница между числом уехавших и приехавших вновь проявляет тенденцию к росту. Чтобы понять причины такого негативного поворота в поведении сальдо миграции придется пойти традиционным путем, т.е. проследить поведение иммиграционного и эмиграционного потоков за изучаемый период времени. Для этого построим кривые динамики потоков уезжающих из Армении и приезжающих в Армению в течение рассматриваемого периода (см. график 1).

¹³ Данные Национальной статистической службы Армении // Статистический ежегодник Армении, 2006, с. 44 (за 2000-2004 гг.); 2010, с. 45 (за 2005-2009 гг.).

*Потоки уезжающих из Армении и приезжающих в Армению
на протяжении 2000-2009 годов¹⁴*



Как видно из графика, поток уезжающих из Армении на протяжении первого десятилетия XXI века не скудел, хотя в 2005-2009 годах проявлял тенденцию к обмелению. Но эта тенденция продержалась только до 2009 года, а после этого уровень наполненности потока уезжающих из страны вновь поднялся. За отсутствием данных этот негативный поворот в динамике потока уезжающих из Армении не изображен на графике. Однако он подтверждается данными электронной системы учета пассажиропотоков Службы Национальной безопасности РА, которая в конце сентября 2011 года зафиксировала существенное увеличение разницы между числом международных пассажиров, въехавших в страну и уехавших из нее. Эта разница в течение первых девяти месяцев с января по сентябрь 2011 года составила 89,8 тыс. человек, что на 11 процентов, или на 9,8 тыс. человек выше показателя 2010 года¹⁵.

Что же касается потока приезжающих в Армению, то он продолжал оставаться стабильным на протяжении всего рассматриваемого

¹⁴ График построен на основе данных Национальной Статистической Службы Армении, взятых из Статистических Ежегодников 2006-2010 гг. (см. www.armstat.am)

¹⁵ Данные электронной системы учета передвижений пассажиропотоков службы Национальной безопасности Армении

периода. Согласно данным национальной статистической службы Армении, поток приезжающих приносил в страну ежегодно несколько десятков тысяч лиц армянской национальности, в числе которых было немало:

- богатых людей армянского происхождения, переезжающих в Армению из стран бывшего СССР, ввиду трудностей и бесперспективности жизни в местах проживания. Они приезжали в Армению либо для оседания, либо для создания плацдарма для будущего переезда, порой они переносили часть своего капитала с целью обезопасить будущее своей семьи;

- этнических армян из стран Ближнего Востока (Ирака, Сирии, Ливана), а также Ирана, приезжающих в Армению в поисках благоприятных условий и безопасной жизни¹⁶;

- новых репатриантов из стран Европы и Америки;
- групп приезжающих из Нагорного Карабаха. При этом, если в конце 80-ых и в начале 90-ых поток из Нагорного Карабаха нес в Армению в основном представителей бедных слоев населения и беженцев, то за последние годы в потоке мигрантов из НКР увеличилась доля состоятельных людей и бизнесменов. Среди переселенцев из НКР сегодня немало представителей карабахской элиты, занимающихся политикой и научно-преподавательской деятельностью.

Значительную часть потока приезжающих в Армению составляют возвращающиеся мигранты. В соответствии с данными социологических исследований, поток возвращающихся мигрантов в основном не сет мигрантов, ранее уехавших из Армении в поисках работы и счастья. Отметим, что среди возвращающихся мигрантов немало:

1. мигрантов, преуспевших в странах приема, но возвращающихся в Армению в новом качестве и с новыми возможностями;

2. мигрантов, не сумевших и не имеющих надежды устроиться в странах приема;

3. бедолаг, которые в силу каких-либо причин оказались депортированными из стран приема.

¹⁶ Отметим, что специальных исследований, которые дали бы возможность описать миграционные потоки этнических армян из этих стран, на сегодняшний день нет.

Поток имигрировавших в Армению в течение последних десяти лет был довольно стабильным по наполненности и этническому составу. Это еще более подтверждает мнение, что произошедшие за последний год изменения кривой сальдо миграции были обусловлены преимущественно возрастанием уровня наполненности потока уезжающих из Армении. Отмечу, что этот факт в последнее время стал предметом серьезной обеспокоенности армянской общественности, которая потребовала объяснений, а также действий. Но объяснения не последовали, а власть не нашла ничего лучшего, чем отрицать существование самого факта увеличения числа уезжающих из страны и сделать труднодоступными и малосопоставимыми данные о миграции. Исследователи также предпочли воздержаться от объяснений по той простой причине, что неоклассический экономический подход, которым подавляющее большинство исследователей продолжает оперировать при анализе миграции по сей день, не дает возможности объяснить новый негативный поворот в динамике потока уезжающих из страны. Этот подход не в состоянии что-либо объяснить в условиях отсутствия видимых перемен в экономических факторах. А сегодня мы имеем дело именно с таким случаем, поскольку за исследуемый период времени, судя по статистическим данным и заявлениям государственных мужей, в Армении не произошло существенных экономических перемен в худшую сторону, не наблюдалось существенного улучшения условий жизни или оплаты труда также у ее миграционных партнеров.

Возникает вопрос: почему же изменилось поведение потока уезжающих из Армении? В рамках неоклассического экономического подхода на этот вопрос трудно ответить. Поскольку этот подход исходит из того, что миграция является сугубо экономическим явлением, а мигранты являются рациональными акторами, основывающими свои решения на расчетах прибыльности того или иного начинания. Неоклассический экономический подход объясняет миграцию существующими различиями между предложением и спросом на рабочую силу в различных странах, полагая, что при значительных страновых различиях в условиях жизни и оплаты труда, трудовой люд мигрирует из одной страны в другую, стремясь получить более высокую цену за свой товар. Неоклассический экономический подход также предполагает, что миграция укладывается в рамки стратегии домашних хозяйств, стремящихся с помощью мигрирования одного из своих

членов увеличить доходы домашнего хозяйства и минимизировать экономические риски, связанные с рыночными отношениями. Именно в рамках семейной стратегии получают объяснение денежные трансферты вынужденных мигрантов, направляющих немалые материальные средства из стран пребывания на родину, с тем, чтобы помочь своим семьям выжить в непростое время. Таковы возможности неоклассического экономического подхода, который позволил исследователям идентифицировать причины армянской миграции первого десятилетия периода независимости и представить ее как ответ на высокую стоимость жизни, нехватку рабочих мест, дешевизну рабочей силы и распространенность коррупции в стране, исходя из предположения, что коррупция стимулировала уход из Армении предпринимателей и производственного капитала. Таким образом, оперирование неоклассическим экономическим подходом помогло исследователям раскрыть причины вынужденной трудовой миграции первого десятилетия периода независимости как явления, обусловленного экономическими факторами, и часть экономической стратегии домашних хозяйств, стремящихся выжить в условиях экономического коллапса. Однако жизнь показала, что обусловленность преимущественно экономическими факторами была релевантна лишь для миграции первого десятилетия периода независимости. Во втором десятилетии периода независимости динамика миграционной деятельности армянского населения перестала укладываться в прокрустовое ложе экономических объяснений. Для ее объяснения исследователям придется расширить границы исследовательского поиска и преодолеть узость экономического подхода, использованием всего разнообразия подходов, выработанных в социологии миграции. Отметим, что сказанное вовсе не означает полного дезавуирования экономических объяснений, которые продолжают и сегодня быть релевантными для объяснения миграционной активности жителей горных и предгорных районов Армении, где уровень бедности достаточно высок. Сказанное лишь подтверждает, что экономическое объяснение не может пролить свет на факт ополнобления потока уезжающих из страны, равно как и на причины повышения уровня миграционной активности молодежи, а также представителей обеспеченных слоев населения, для которых эмиграция перестала быть деятельностью во имя поиска хлеба насущного или частью семейной стратегии. Сказанное лишь утверж-

дает, что динамическая миграционная реальность Армении подвергла сомнению универсальность и самодостаточность неоклассического экономического подхода и продемонстрировала, что изменения миграционных показателей могут происходить в условиях неизменности и не в связи с экономическими факторами. Поэтому исследователям миграционных процессов Армении сегодня ничего не остается делать, как отказаться от абсолютизации неоклассического экономического подхода и признать, что современная армянская миграция является сложным социальным явлением, перетерпевающим влияние совокупности разнотипных факторов. Такое признание на деле означает, что исследователи должны будут действовать в соответствии с теорией кумулятивной причинности миграции шведского исследователя Гуннара Мюрдаля, обратившего внимание на недостаточность экономического объяснения миграции и эвристических возможностей применения к анализу миграции социально-сетевого и структурно-исторического подходов. Попробуем продемонстрировать эти возможности.

Учитывая, что при анализе миграции наиболее часто говорят об исторических корнях этого явления, применим к анализу современной армянской миграции структурно-исторический подход, который показывает, что в течение веков поколения армян использовали миграцию для ответа на сложные проблемы непростого существования в условиях отсутствия собственной государственности и зажатости между империями. Армяне продолжали эксплуатировать модель трудовой миграции и следовать традиции мигрирования и в советское время. В 70-ых годах XX века по данным социологического исследования сезонной миграции, предпринятого известным демографом Арменом Карапетяном, из Армении ежегодно более 75 тыс. мигрантов уезжали на сезонные работы и заработки в Россию. Распад СССР, изменивший образ мира, не отменил приверженности нашей нации к традиции миграции. Скорее наоборот: распад империи сделал вынужденную миграцию армян массовым явлением: сотни тысяч людей вовлеклись в активную миграционную деятельность. Это позволяет утверждать, что армяне как периферийная нация за все периоды своей долгой истории, и в том числе и за время существования советской империи и даже после ее распада, продолжали посылать своих представителей в качестве мигрантов в лоно тех наций, с которыми они имели исторические связи и отношения. Тем самым, армяне как бы расширяли и

продолжают расширять пределы своей страны, ставшей за последнее время такой маленькой...

С этой точки зрения современный взрыв миграционной активности наших соотечественников тесно связан с распадом советской империи. Как и во всех других случаях распада империи, распад советской империи привел в миграционное движение массы старой элиты и групп населения, связанных с метрополией культурными и социальными узами. После распада империи на постсоветском пространстве уходящая метрополия потянула за собой группы населения, связанные с ней тесными узами. Одновременно распад советской империи раскрыл перед мигрантами врата многих стран мира и дал возможность реализоваться накопленному в стране потенциалу миграции.

Однако влияние культурно-исторических факторов этим не исчерпывается, ибо в нашем случае следует говорить также об иных исторических корнях традиции мигрирования, которая действительно уходит в глубь армянской истории и прежде всего в факт насильственного лишения армян Родины во время геноцида 1915-1923-гг. Именно вследствие геноцида для армян на протяжении многих десятилетий родиной оставалась «Страна» («Еркир»), которой они лишились. Можно предположить, что факт потери исторической родины лежит в основе отчужденности от современной родины, отчужденности, ослабившей узы, привязывающие армянина к своей стране. Закреплению этой традиции, по-видимому, способствовало также психологическое умение армян успешно адаптироваться в инонациональной среде и поддерживать свою идентичность в условиях диаспорального существования. Однако значение факторов отчужденности и навыка диаспорального существования нельзя преувеличивать, поскольку они могли быть и явились не более чем мотиваторами миграционного поведения. Указание на эти мотиваторы лишь дополняет картину феномена повышенной миграционной мобильности населения Армении и традиции покидания страны. Таким образом, приходится заключить, что использование миграции как средства разрешения проблем не является новым, а мигрирование стало чертой образа жизни армян, т.е. приобрело силу культурной традиции, закрепленной многовековой миграционной практикой.

Ա. Խ. – Իսկ ի՞նչ մեխանիզմ է պետք, որո՞նք են այն հիմնական կետերը, որոնք պետք է փոփոխվեն այսօրվա համակարգում և երկիրը տանեն դեպի արդիականացում:

Լ. Հ. – Մարդու իրավունքների պաշտպանության մի ամբողջ համակարգ պետք է լինի, որը թույլ չի տա, որ գործարանատերը առանց պատճառի և մեկնաբանության աշխատողին աշխատանքից դուրս շարտի: Պետք է լինեն սանկցիաներ և սանկցիայի կիրառման մեխանիզմ, որոնք կպաշտպանեն այդ բանվորների իրավունքները, կամ երբ բանկերը գյուղերը պահում են վարկի տակ, պետք է ստեղծվի մի մեխանիզմ, որը թույլ չի տա այդ բանկին այդքան բարձր տոկոսներով վարկեր տալ: Փոփոխություններ են պետք նաև այսօրվա դատարաններում՝ մարդու իրավունքներին վերաբերող պրոցեսները պետք է առանձին դատարաններում քննվեն, դրանք չպիտի գնան սովորական և կոռումպացված դատական պրոցեսների ճանապարհով: Բավական չէ օմբուդսմեն նշանակելը, նա մենակ ոչինչ չի կարող անել, մի ամբողջ մեխանիզմ է պետք, որը կփոխի մեր գոյության ձևը: Ավելին, արդիական երկիրը չի կարող ունենալ այսպիսի հետամնաց խորհրդարան, որը ոչ մեկի շահը չի արտահայտում: Յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր է ասել, թե ինչի համար է նստած խորհրդարանում և ում շահն է այնտեղ պաշտպանում:

Ա. Խ. – Ձեր նշած հեղամնաց խորհրդարանը զարգացնելու փոխարեն, այսօր արդեն գաղափարներ կան, որ հայաստանյան խորհրդարանը վերածվի երկաստիճանի: Ինչպե՞ս եք գնահատում այդ գաղափարը, արդյոք նման խորհրդարան պետք է՞ մեր երկրին:

Լ. Հ. – Հայերը ցանցային ազգ են, բայց մեր պետությունը ցանցային պետություն չէ: Մեր պետությունը պետք է ունենա կոտ պառլամենտ, առավել ևս պատերազմական վիճակում գտնվող պետությունը պետք է ունենա շատ կոտ խորհրդարան, որը պետք է պաշտպանի մարդկանց շահերը: Ես նման խորհրդարանի հեռանկարը Հայաստանում չեմ տեսնում, դեռևս Խորհրդային Միությունում հայտնի էր մի բան, որ արտասահմանյան գործակալների թվում հայերը մեծ թիվ էին կազմում, որովհետև սփյուռքից շատ հայեր էին որպես գործակալ աշխատում: Ես չեմ ուզում ասեմ, որ սփյուռքի ժողովուրդը գործակալ է, պարզապես ես գտնում եմ, որ մենք չենք կարող հետպատերազմյան վիճակում գտնվող երկրում ունենալ այդպիսի խորհրդարան: Նրանք կարող են ստեղծել մեկ ուրիշ մարմին, որտեղ կարող են ներկայացված լինել սփյուռքի ներկայացուցիչները: Այդ հանրային խորհուրդը, որ ստեղծել են, թող հենց այնտեղ էլ ստեղծեն այդ մարմինը, բայց խորհրդարանը պետք է լինի կոտ, Հայաստանի քաղաքացիների կողմից ընտրված: Ցանկացած տեղ կարելի է ընդգրկել սփյուռքի ներկայացուցիչների, բայց այդ մարդիկ չեն կարող ներկայացնել Հայաստանի ժողովրդի շահերը, նրանք իրենց սեփական երկրի շահերն են արտահայտելու, դրանից ի՞նչ օգուտ հայերին, ի՞նչ մոդեռնիզացիա է դա: Առանց այն էլ՝ Հայաստանում այնպիսի վիճակ է, որ մեր խորհրդարանը հնարավոր չէ ընտրությունների ճանապարհով ձևավորել. պետք չէ ավելի խափանել այդ գործը, այդ խորհրդարանն ավելի տարրալուծել չի կարելի...

1in.am, 2011, 2 մայիսի

**Հայաստանին պետք է ոչ թե դեմքերի փոփոխություն,
այլ նոր լուծումներ**
[հատվածներ]

«Անհասկանալի է, թե ինչ է նշանակում նոր Ազգային ժողով: Գաղափարախոսություն չկա՝ ահա սրա վակուումը կա մեզանում, ժողովուրդը ոչ թե դեմքերի փոփոխությունների է սպասում, այլ ուղու փոփոխության, քանզի դեմքերի փոփոխությունը ոչինչ չի կարող տալ, եթե այդ նոր դեմքերը նոր գաղափարախոսություն չեն բերում, եթե նրանք չեն տեսնում և չեն առաջարկում ծառացած ծանր խնդիրների լուծման միակ ուղին ...»:

«...Կարծում եմ, որ մենք կարիք ունենք մի գաղափարախոսության, որը կտա հստակ պատասխան այն հարցին, թե Հայաստանն ինչպես է գոյատևելու, ինչպես է շարժվելու առաջ, ինչպես է հաղթահարելու ծառացած մարտահրավերները: Մենք հայտնվել ենք շատ լուրջ խնդիրների առջև՝ ամբողջ տարածաշրջանն է կանգնած փոփոխությունների առջև: Մենք մինչև այսօր անընդհատ խոսում ենք անձերի և առանձին դեպքերի մասին, մինչդեռ մեր շուրջ փոխվում է ամեն ինչ՝ պատմական դարաշրջանն է փոխվում, և հարց է առաջանում, թե Հայաստանը դեպի առաջ ինչպես է գնալու և ինչ կողմնորոշում է ունենալու: Օրինակ՝ Սակաշվիլին ասում է, թե Ռուսաստանին Վրաստանը պետք է ճորտի կարգավիճակով ու հայտարարում, որ Վրաստանն այլևս երբեք ճորտ չի լինելու: Սա շատ հավակնոտ կուրս է և խոսում գաղափարախոսություն, անկախ երկրի գաղափարախոսություն, գաղութային լուծը թոթափած երկրի գաղափարախոսություն: Այդ հպարտ գաղափարախոսությունն է ընկած Վրաստանի քաղաքական հաջողությունների հիմքում: ... [մինչ] մենք, հայտնի պատճառներով, չենք կարողանում խոսել արժանապատվության լեզվով Ռուսաստանի հետ: Սակայն իրավիճակը արագ է փոխվում. Իրանը դարձել է թիրախ, իսկ Ռուսաստանի վերադարձը կայսերական ուղեծիր մերժվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից: Ի՞նչ է անելու Հայաստանը շահերի սրման պահին: Այս ընտրարշավում ընդգրկված ուժերը պարտավոր են պատասխանել այդ հարցին. ասֆալտ են գցում և պարարտանյութ բաժանում: Չեն պատասխանում նաև այն հարցին, թե ի՞նչն է խանգարում մեզ խոսել արժանապատվության լեզվով երկրի ներսում՝ գաղութային անցյալը, եղե՞ռնը, թե՞ հավասար չլինելու

համոզմունքը, թե՛ վախը: Հնարավոր է՝ արժանապատվության պակասը և ժամանակակից աշխարհի խաղի կանոններին չտիրապետելը: Սրանք են այն հարցերը, որոնց պատասխանները կկողմնորոշեն հայ ընտրողին: Քաղաքական ուժերը պարտավոր են նաև պատասխանել այն հարցին, թե ինչ պետք է անել արժանապատվության լեզվին տիրապետելու համար»:

«Ժողովուրդը սիրում է պարզունակ լուծումներ և հավատում է, որ առանց էլիտայի հասունացման՝ կարելի է արդյունք ստանալ: Եթե գործարարներն այնքան չեն հասունացել, որ իրենց լոբբիստներին ուղարկեն ԱԺ, այլ իրենք են ուզում կոճակ սեղմել, ապա այդ խնդիրն անլուծելի է, և իշխանությունը չի կարող նրանց արգելել մասնակցել ընտրություններին, որովհետև վերջին հաշվով ընտրությունները պայքար է, և տնտեսական էլիտան, որը սովորել է ապրել իշխանությունը չարաշահելու հաշվին, չի հրաժարվի կոճակ սեղմելուց: Այնպես որ, կարծում եմ, որ չնայած իշխանությունների խոստումներին, նրանք չեն կարողացել համոզել իրենց տնտեսական էլիտային: Իշխանությունը չի կարող ազատվել կոճակ սեղմելու ցանկություն ունեցող գործարարներից, նրանք սովորել են և՛ տնտեսական, և՛ քաղաքական իշխանությունը իրենց ձեռքում պահել:

Ես չեմ հավատում արհեստական գործընթացներին, իսկ ֆինանսական և քաղաքական իշխանության միաձուլման գործընթացը իրականում շատ խորն է ու բարդ, ու եթե տնտեսական էլիտան այդպես է սովորել ապրել, ապա մենք նրան չենք կարող խանգարել այս անգամ ևս: Բացի այդ՝ Հայաստանը սովորել է ոչ լեգիտիմ ընտրությունների, իսկ Եվրոպայի պահանջը կատարելու համար պետք է փոխվի ամբողջ ժողովուրդը, պետք է փոխվեն քաղաքական էլիտայի սովորությունները, պետք է փոխվի քաղաքական ուժերի գործառնման մեխանիզմը: Ես դեմ եմ պատրանքների սերմանմանը, դեմ եմ, որ մենք ակնկալենք շատ պարզ լուծումներ, որովհետև մեզանում այսօր պարզ լուծումներ չկան, բոլոր լուծումները բարդ են: Եթե մենք ուզում ենք, որ գործարարները չգնան խորհրդարան, ապա պետք է վերացնենք կոռուպցիան: Եթե մենք ուզում ենք, որ գործարարն ԱԺ իր փոխարեն ուղարկի իր լոբբիստին, ապա պետք է փոխենք տնտեսակարգը, իսկ քանի դեռ տնտեսակարգը փոխված չէ, գործարարը կշարունակի ամեն գնով մտնել խորհրդարան: Նա կգնի բոլորին՝ այդ հրամայականն իրական-

նացնելու համար: Հայաստանում արդեն պարզ լուծումներ գոյություն չունեն, ու երբ Եվրոպան իշխանություններից խոստումներ է պահանջում, նա շատ լավ գիտի, որ իշխանությունները այդ խոստումը կատարել չեն կարող: Ուրեմն, խոստումներն անհրաժեշտ են Հայաստանի իշխանություններին ճնշված, կախյալ վիճակում պահելու համար: Եվրոպան շատ լավ գիտի, որ Հայաստանը իմիտացիոն ժողովրդավարության երկիր է, որ գործարարն էլի գնալու է խորհրդարան, բայց Եվրոպային պետք է, որ վաղը իշխանություններին մեղադրելու հնարավորություն ունենա ասելով՝ տես չկատարեցիր խոստումդ: Այլ կերպ չի կարող լինել, քանզի Ղարաբաղի խնդիր կա լուծելու, կողմնորոշման խնդիր կա, Եվրոպան պետք է իրավունք ունենա Հայաստանին հարցնելու՝ դու եվրոպակա՞ն երկիր ես, թե՞ ոչ: Այս պահին ճիշտը Եվրոպային չգումարվելն է, այս վիճակում ես կուզենայի, որ մենք հասկանանք, որ վիճակը շատ բարդ է, որ եթե մի հարցը լուծված չէ, մյուսն էլ չի լուծվի: Ցանկությունն, իհարկե, ահռելի է, բայց փոփոխության նախադրյալները չկան՝ այստեղ սուբլիմատոր մեխանիզմն է գործում, երբ կա ահռելի ցանկություն և մեծ պարտադրանք, այդ պատճառով էլ իշխանությունն այլ ելք չունի, քան նոր մեխանիզմներ հնարելը, ինչպես օրինակ՝ կաշառք ընտրատարածքից դուրս: Իշխանությունը պարտադրված է լինելու գտնել կեղծելու նոր ձևեր, բայց դրանից կաշառքի առկայությունը չի փոխվում: Այսինքն՝ մենք ինքներս, որպես այս երկրի քաղաքացիներ, պետք է ուզենանք, որ այդ ամենը տեղի չունենա: Չէի ցանկանա կրկին անգամ համոզվել կեղծիքների շտեմարանի հարստության և մարդկային ստորության անսպառության մեջ»:

«Հայաստանում անոմիկ վիճակ է ձևավորվել՝ մենք նորմերից, բարոյականությունից, հեղինակությունից դուրս ենք: Եվ մենք ուզում ենք, որ անոմիկ վիճակում ժողովուրդը նորմալ մտածի: Մեր հեռուստատեսությամբ ցուցադրվող սերիալներում տեսեք, թե ինչն է գովերգվում: Ես հպարտ էի, որ ես հայ եմ և միշտ ուզեցել եմ ցույց տալ բոլորին, որ հայերը հպարտ են, գիտուն ու դաստիարակված, իսկ այդ սերիալները նայելով՝ սկսում եմ ամաչել, որովհետև այնտեղ հայի զգվելի տեսակը դարձել է սովորական: Եթե մարդիկ փողոցն անցնում են սխալ տեղով և չեն պատժվում, ապա նրանք սովորում են խախտել նորմը և հաջորդ նորմը նրանք ավելի հեշտ են խախտում: Այլ բան դժվար է ակնկալել, եթե այդ սերիալներում ցույց են տալիս, որ նորմ խախտողը բարգավա-

ճում է: Ընտրությունների ժամանակ էլ փող վերցնելն է նորմի խախտում, բայց եթե կարելի է ուրիշ նորմ խախտել և անպատիժ մնալ, ապա այդ դեպքում ինչու՞ չի կարելի այս մեկ նորմը ևս խախտել»:

«... Դա միայն անտարբերություն չէ, այլ նաև երկրի տերը չլինելու փաստը, ժողովուրդը չի սիրում իր երկրի տերը լինել, նա սովորել է ապրել ուրիշի երկրում և այս իրավիճակի համար մեղավորներ փնտրել: Ես գտնում եմ, որ Հայաստանը կդառնա երկիր միայն այն ժամանակ, երբ մենք դառնանք մեր երկրի տերը ու կարողանանք տեր կանգնել մեր անցյալին, արած-չարածին: Մենք մի ամբողջ դար է արդեն ապրում ենք անցյալը չմարսած, մենք չկարողացանք Եղեռնը հաղթահարել, չկարողացանք հասնել Եղեռնի ճանաչմանը, մենք մեր անցյալը չենք կարողանում հաղթահարել, բայց նաև դասեր չքաղեցինք մեր անցյալից: Այդ չհասկացված անցյալը բեռնած գնում ենք դեպի ապագա: Սակայն արդեն ոչ միայն անցյալն է չհասկացված, այլ նաև ապագան, քանզի չկա ապագայի տեսլականը, ինչպիսին է լինելու Հայաստանի ապագան: Լինել-չլինելու հարցը կանգնած է մեր առջև: Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը պարտավոր են պատասխանել նաև այդ հարցին»:

«Մենք սպասում ենք այն հզոր գաղափարախոսությանը, որը կլուսավորի մեր ուղին և մեզ կհանի այս վիճակից: Ես չեմ ուզում հոռետեսական պատկեր ուրվագծել և անելանելի վիճակ նկարագրել, բայց այլևս չեմ կարողանում լսել, թե ինչպես են մեծ և փոքր քաղաքական «գործիչները» հայտարարում, թե գնալու են խորհրդարան ու մենակ փոխելու ամեն ինչ: Նրանք տեղյակ չեն, որ երկրում խեղաթյուրումն ու անոմիան այնքան խորն են, որ կպահանջվեն տիտանական ջանքեր և հանճարեղ ուղեղներ, հզոր կամք՝ իրավիճակը փոխելու համար: Եթե ոմանք չեն հասկանում դա, ապա լավ է, որ նրանք որևէ տեղ չգնան: Հայաստանում անոմիան շատ խորն է, ու մինչև մի օր մենք ազգովի չլծվենք այդ անոմիան հաղթահարելու գործին, մեր երկիրը երկիր չի դառնա»:

«...Մաշտոցի պուրակում հենց հիմա գնում է պայքար Հայաստանի ապագայի համար: Սա շատ հուսադրող երևույթ է, սա նշանակում է, որ դեռ կան երիտասարդներ, ովքեր կմնան մեր երկրում՝ սա հույս է: Այն, որ սեփականատերերի խումբը չի հասկանում այս պայքարի իմաստը և շարունակում է կառչած մնալ իրենց ապրանքներից՝ մեկ

անգամ ևս ապացուցում է հայ, այսպես կոչված, «ընտրախավի» թշվառությունը, համոզված եմ, որ խորհրդարանի կոճակները նրանց չեն փրկի հայերի ապագա սերունդների արդար դատից, որը պատասխան կպահանջի ընտրախավից հայրենիք ստեղծելու այս պատմական շանսը կորցնելու համար»:

1in.am 2012, 4 սեպտ.

Պետք է չեղյալ համարել մոսկովյան պայմանագիրը (պատր.՝ Սոնա Արշունեցի)

Ս. Ա.-ի նամակը. «Հարգարժան Լյուդմիլա Հարությունյան, անկախությունից ի վեր ես փնտրում եմ իմ հարցերի պատասխանները.

Եթե մենք այսօր համարում ենք Թուրքական կառավարությանը Օսմանյան կայսրությունում նրանց նախնիների կատարած ոճրագործության պատասխանատվուն, ինչու՞ նույնը չենք պահանջում մեր դաշնակից Ռուսաստանից, քանի որ նա ոչ պակաս պատասխանատու է Ադրբեյջանին մեր փորածքների բռնակցման ու մեր պարմական հայրենիքի՝ Թուրքիային նվիրատվության համար: Միթե՞՝ ռուսական արխիվներում չեն պահպանվում համապատասխան փաստաթղթեր, թե՞՝ մեր դիվանագիտությունն է կաղում վեր հանելու հույժ կարևոր մի իրողություն, որ լույս կսփռի շատ մութ ու կնճռոտ հարցերի վրա»:

Լ. Հ.-ի պատասխանը. «Շնորհակալ եմ հարցի համար, որովհետև կարծում եմ՝ սա Հայաստանի վաղվա արդիական խնդիրներից մեկն է: 1989 թ.-ին ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը Սովետմիության պատգամավորների առաջին կոնգրեսի ատյանից կարդաց մի դիմում, որում պահանջվում էր մոսկովյան պայմանագիրը չեղյալ համարել: Ու ես մտածեցի, որ այդ հանճարեղ մարդը հանճարեղ է ոչ միայն գիտության մեջ, այլ նաև՝ քաղաքականության. մարդն իր հեղինակությունը դրեց՝ այդ հզորագույն քայլը կատարելու համար: Սրա մասին Մոսկվայից խոսվեց, բայց Երևանից չխոսվեց այն պատճառով, որովհետև անկախությունից հետո Հայաստանի լիդերական կազմը մի խնդիր էր ուզում լուծել՝ լավացնել հարաբերությունը Թուրքիայի հետ և միգրացե Հայաստանը դուրս բերել շրջափակումից: Չեմ ուզում խորանալ՝ ճիշտ էր դա, թե՞ սխալ, բայց Վ. Համբարձումյանի այդ քայլը Հայաստանում իշխանության կողմից ընկալվել էր կարող: Սակայն ես կարծում եմ, որ այդ հարցը պետք է բարձրանա, այո՛... Յավոք սրտի՛ հայոց պատմու-

թյունը դեռ մարսված չէ, և մենք բազում պատմական խնդիրներ ունենք լուծելու, որոնք երջանիկ պետությունները լուծել են պատմական ճշգրիտ պահին: Մեր ազգը ճշգրիտ պահին չի կարողացել լուծել և թողել է հաջորդ սերունդներին:

Հարգանքներով՝ Լյուդմիլա Հարությունյան

mamul.am – 2016. – 17 օգոստ.

Լ. Հ. Հարությունյանի մտքերից

«Ով կարողանում է խորը բովանդակությամբ լցնել յուրաքանչյուր ռուպեն, նա անսահմանորեն երկարացնում է իր **կյանքը**»:

«Համոզմունքը պայքարի բովով անցած ու կոփված գիտելիքն է»:

«Ժպիտը միջազգային լեզու է»:

«Ներկան անցյալի և ապագայի հանդիպման ու հրաժեշտի անվերջանալի պահն է»:

«Որքան բարձր է այն պատվանդանը, որի վրա բեմում է մեծաշուք թզուկը, այնքան ավելի լավ է երևում, որ նա իսկապես թզուկ է»:

Դաստիարակչական մտքերի հայկական գանձարան
(էջ 30, 49, 76. 91, 97)

«Բարբարոսության և դժբախտության մասին ինֆորմացիան պիտի չափավոր լինի: ...Կա ինֆորմացիայի մի ծավալ, որն ամրացնում է ժողովրդի կամքը, իսկ երբ չափն անցնում է, տալիս է հակառակ արդյունք՝ առաջանում է վախ ու կոտորում կամքը»:

«Մեր էկոնոմիկան մինչև հիմա կառուցվել է որպես քաղաքականության կցորդ, մինչդեռ ճիշտ հակառակը պիտի լիներ: Տնտեսության վարման ավտորիտար կառուցվածքը կասեցնում է առաջընթացը»:

«Աշխարհում ոչ մի բան անվճար չէ: ... Եթե չփոխենք տնտեսական մեխանիզմը, քաղաքական իրավիճակը, սոցիալական միկրոկլիման, վերաբերմունքը ազգի և նրա գործերի նկատմամբ, եթե չդառնանք սոցիալապես պատասխանատու և գործունեության սուբյեկտ, տերը մեր երկրի՝ Հայաստան մեր երկրի, ապագա սերունդները կվճարեն է՛լ ավելի մեծ հաշվով և, վերջապես, է՛լ վճարող է՛լ չի մնա: ... Սխալներն ուղղելու ժամանակն է, հիմքերի ու հենքերի մասին մտածելու ժամանակը, սոցիալական ինֆանտիլիզմից ազատվելու ժամանակը»:

Խորհրդային Հայաստան, 1990, 1 փետրվարի

«Родину не выбирают. Она привязывает к себе психологической тканью, сотканной из чувства земли и матери, исторической и социальной памяти, других, пока не изведанных материй, разрыв которых порой оборачивается драмой и для Родины, и для человека самого».

Армянский вестник, 1990, N 3 (5), март

«Տարակույս չկա, որ Հայաստանի դպրոցը պետք է լինի հայկական, որ երեխան պետք է բնական կյանքով ապրի և իմանա իր պատմությունը. ... [սակայն] մտավախությունս այն է, որ հանկարծ աչքաթող չանենք կրթության քաղաքականության մասը: Չէ՞ որ հայ ազգն ունի հավակնություն և պետք է հավասարի իրավունքով կանգնի ժամանակակից զարգացած, քաղաքակիրթ ազգերի կողքին: Դրա համար նա պետք է ստանա այնպիսի կրթություն, որ չամաչի ԱՄՆ-ում, Անգլիայում, Ճապոնիայում...»

Իրավացի են նրանք, ովքեր գտնում են, որ մենք պետք է արտահանենք ամենաթանկ արտադրանքը՝ մտքի արդյունքը, ոչ թե մեր ուղեղների արտահոսքի բազա դառնանք: Ցավոք սրտի, մինչև հիմա արտահանում ենք ուղեղներ...»:

Դպրություն, 1990, 1 մայիսի

«Ժողովրդին զգացմունքներով չի կարելի ներքաշել քաղաքականության մեջ և դատապարտել նրան ֆրոստրացիայի. դա հավասար է պարտության»:

Միտք, 1990, 23 դեկտ.

«Հայաստանի վիճակում գտնվող երկիրը երկու արժեք ունի՝ ժողովրդի միասնությունը խնդրի շուրջ և պրոֆեսիոնալիզմը: Մինչդեռ պրոֆեսիոնալիզմը գործի մեջ չի դրված: Գերադասվել է ոգևորությունը, որը չի կարող հարատևել»:

«Այսօր ողջ հայ ժողովուրդը զբաղվում է քաղաքականությամբ, խորհրդարան է ընտրվել: Սակայն այսօրվա խորհրդարանի սոցիալական հիմքը ողջ ժողովուրդը չէ, դա մի խմբի հիմքն է: Ժողովրդի մի մասը դուրս է մնացել քաղաքականությունից և շուտով կդառնա ուրիշ խմբի սոցիալական հիմք, այսինքն՝ կապքարի խորհրդարանի դեմ»:

«Ազգային միասնության ճանապարհը չի ճանաչում «Ով մեզ հետ չէ, մեր դեմ է» կարգախոսը: Բոլոր ուժերը պետք է զբաղվեն իրենց արժանի գործով: Պրոֆեսիոնալները պետք է գտնեն իրենց տեղը

Հայաստանում, թե չէ կթողնեն կգնան: Բոլորս պետք է լծվենք մեր ազգային խնդրի իրականացմանը»:

«Լուրջ ուշադրության է կարոտ հայ ժողովրդի սոցիալական, հոգեբանական վիճակը: Այսօր Հայաստանում երջանիկ մարդ գրեթե չկա: Մինչդեռ հզոր է այն երկիրը, որի քաղաքացիները երջանիկ են»:

Առաքաստ, 1991, հունվար

«А мудрость нам сейчас нужна, как никогда раньше... Нужно, чтобы, оставаясь нацией, не имеющей большого опыта государственности, научиться законам большой политики преодолеть в себе комплекс заганности в тупик, чтобы избавиться от излишней прямолинейности своих оценок, пристрастий и антипатий, в политике овладеть искусством “полутонов”, открывающим дорогу к возможным компромиссам...».

Новое время, 1991, декабрь

«Профессиональные социологи сегодня, как правило, предпочитают быть максимально корректными и нейтральными, поскольку на рынке информации ценится лишь объективность. И все-таки хотелось бы попросить бережнее относиться к социологической науке – она нам очень нужна, ибо демократическое общество не может функционировать без ее данных, обеспечивающих обратную связь в механизме социального взаимодействия и управления...».

Азг, 1992, февраль

«Дай бог, чтобы Турция быстрее пришла к ценностям демократии и соблюдения прав человека. Но для этого ей предстоит пройти еще немалый путь. Поэтому хотелось бы, чтобы мы воздержались от экспериментов с нашей исторической памятью. И не только потому, что это соответствует сегодняшнему миропониманию подавляющего большинства наших сограждан... Сегодня она поддерживает наше традиционное место в Европе, защищает и сохраняет нас в качестве нации. Лишиться ее – означает потерять несущую ось и стать полностью безоружной перед Турцией и весьма обострить проблему поиска нашей новой роли в Европе и во внутринациональных интеграторах. Отмечу, что, говоря о памяти, я вовсе не имею в виду комплекс жертвы, от которого давно пора освободиться».

Урарту, 1992, июн, N 22-25

«Политика тесно переплетается с проблемами власти, вокруг которой не утихает борьба. В этой борьбе мужчины вытеснили женщин. Можно сказать, что в борьбе за власть женщины потерпели всемирное поражение. И чтобы облечь это в красивую оболочку, стали создаваться социальные мифы о женщине – вечной хранительнице семейного очага. Сфера власти была четко распределена: вне дома – у мужчины, в семье – у женщины. В эти мифы верили сравнительно долго, но во многих странах они стали забываться: появилась женщина – премьер-министр, министр иностранных дел, министр обороны и т.п.

Женщину в политике отличает особый стиль, она более конкретна и рациональна, действует гибко, целеустремленно. Женское начало политике только на пользу. И хотя на самых высоких уровнях власти женщин мало, в массе своей они в качестве избирателей, жен, матерей, да и просто, как фактор влияния, в немалой степени формируют политику. Стоит ли долго говорить о теневом влиянии женщин на поведение многих государственных деятелей?».

Урарту, 1993, N 11(37)

«Западный мир, в целом преодолевший многотрудный период модернизации, предлагает свои модели и наработанный опыт в области коллективной стратегии решения социальных проблем и социальной работы для более успешной адаптации личности в обществе. Но достаточно было недолгого периода увлечения западными моделями, чтобы понять, что социальная работа – это область профессиональной деятельности, сформированная на базе западной культуры. Прямое перенесение ее форм, моделей, технических приемов на отечественную социальную почву вряд ли возможно. Выработанная десятилетиями своеобразная культура нашего социального бытия отторгает западные модели как чужеродные и для приобщения к опыту, накопленному человечеством, потребуются дополнительные усилия...».

Социальная работа: теория и практика, 1995, с. 5

«...Պետք է սկսել ինստիտուտների ազատականացումից, օրենքներից: Ստեղծվելիք բանաձևը պետք է ժողովրդի անվտանգությունն ապահովի: Խոսքը բոլոր ասպարեզներում անվտանգությունն ապահովելու մասին է: Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս,

որ ժողովրդի մեջ պաշտպանվածությունը կորած է՝ թե՛ սոցիալական, թե՛ առողջապահական և թե՛ ցանկացած այլ ասպարեզում: Արտաքին անվտանգությունն ուղղակիորեն կապված է Ղարաբաղի խնդրի լուծման հետ: Ուրեմն այս հարցն էլ է վերջին հաշվով մտնում ամենօրյա գոյության խնդիրների մեջ: Ղարաբաղը տարածքների խնդիր չէ, ազգի պարտվածության և հաղթության զգացումն է, որը արդարացնում է մեր այսքան տարվա տառապանքները»:

Հայոց աշխարհ, 1998, 12 փետրվարի

«Հայ հասարակության գերխնդիրն այսօր սոցիալական բարեփոխումների իրականացումն է: Մենատիրության հաղթահարում, անձի, հասարակության և խմբերի փոխհարաբերության մեխանիզմի նորոգում, քաղաքացիական հասարակության սկզբունքների յուրացում, նոր արժեքների սերմանում, մարդու սոցիալական պաշտպանվածության ապահովում, աղքատության կրճատում՝ ահա մի քանիսն այն նպատակներից, որոնց ուղղված են սոցիալական բարեփոխումները: Սոցիալական բարեփոխումների նպատակներից մի մասն ուղղակիորեն, իսկ մյուս մասն անուղղակիորեն կապված են և՛ պայմանավորված սոցիալական աշխատանքի ինստիտուտի, և՛ մշակույթի գոյության, և՛ գործառման փաստով: Այդ կապակցությամբ կարելի է ասել, որ մեր հասարակության մեջ նման հիմնարար փոփոխությունները չափազանց դժվար կլինի իրականացնել առանց մասնագետ սոցիալական աշխատողների ակտիվ մասնակցության:

Այսօր սոցիալական աշխատողն օգնող մասնագիտության ներկայացուցիչ է, որը կոչված է սատարելու մարդուն և հասարակությանը՝ իրենց փոխհարաբերություններում և բարեկեցության հասնելու գործում: Սոցիալական աշխատողի կոչումն է ուժեղացնել մարդուն, որպեսզի նա ի վիճակի լինի հաղթահարել խմբի և հասարակության հետ համագործակցելու բարդությունները, համերաշխ լինի սոցիալական միջավայրի և ինքն իր հետ, կարողանա ապահովել սեփական իրավունքների հարգումը: Սոցիալական աշխատողը կոչված է դառնալու միջնորդ՝ հասարակության և հասարակության անդամի միջև, առավելագույնս պաշտպանելու սոցիալապես անպաշտպան խմբերը, օգնելու հասարակությանն արդյունավետ կերպով լուծել կամ մեղմել սոցիալական բախումները և իր անդամների հետ փոխհարաբերությունները կառուցել մարդու իրավունքների հարգման սկզբունքի հիման վրա:

Սոցիալական աշխատանքն արձագանքում է հասարակության անկումային և արտակարգ իրավիճակներին, մեծ դեր ունի կատարելու աղքատության կրճատման, մարդկանց և համայնքների բարօրության և կյանքի որակի բարելավման գործընթացում: Այդ առումով սոցիալական աշխատանքն ի վիճակի է հեշտացնել բաց հասարակության կերտման մեր ճանապարհը»:

Սոցիալական աշխատանք: Գ. 5, 2002, էջ 4

«... Я не предлагаю ослаблять мобилизованность нашего внимания, о коварстве Турции всегда нужно помнить, но я против преувеличения степени опасности, исходящей от Турции. Мысль об этой опасности вводит нас в оцепенение. Мы – переживший геноцид народ, и страх перед возможностью повтора этой трагедии у нас на инстинктивном уровне. Страх этот нужно постепенно преодолевать, и лучшее средство – стать сильной во всех отношениях страной, в экономическом, военном, идейном. И уметь глубоко анализировать политическую ситуацию».

Новое время, 2002, 10 июля, N 854

«Հայաստանում պրոբլեմն այն չէ միայն, որ ազատ շուկան տանուլ է տվել մոնոպոլ գնագոյացմանը... Այստեղ գոյություն ունի ինստիտուցիոնալ, խորքային ճգնաժամ՝ և՛ իշխանության, և՛ տնտեսության: Դա հեշտ չէ փոխել: Մտածելակերպը և քաղաքական մշակույթը հարմարեցված են հզորների շահին, իսկ կոռուպցիան դարձել է գործող մեխանիզմ»:

168 ժամ, 2011, 4-6 հունիսի, թ. 57

«Հայաստանի հայաթափման հարցը հենց այնպես ու ինքն իրեն չի լուծվի: ... Այս ամենի համար պատասխանատվություն են կրում բոլոր նրանք, ովքեր չեն գտնում կամք և համառություն հակամիգրացիոն արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար: Պատասխանատու են բոլոր նրանք, ովքեր չեն գիտակցում, որ պարզունակ համերգներով և «արի տուն» կոչերով ոչինչ չի ստացվի՝ հային տուն չես վերադարձնի»:

Ժամանակ, 2012, 1 փետրվարի

«Գաղափարախոսություն չկա՝ ահա սրա վակուումը կա մեզանում, ժողովուրդը ոչ թե դեմքերի փոփոխությունների է սպասում, այլ ուղու փոփոխության, քանզի դեմքերի փոփոխությունը ոչինչ չի կարող տալ, եթե այդ նոր դեմքերը նոր գաղափարախոսություն չեն բերում,

եթե նրանք չեն տեսնում և չեն առաջարկում ծառացած ծանր խնդիրների լուծման միակ ուղին: ... Ի՞նչն է խանգարում մեզ խոսել արժանապատվության լեզվով երկրի ներսում՝ գաղութային անցյալը, եղե՞ռնը, թե՞ հավասար չլինելու համոզմունքը, թե՞ վախը: Հնարավոր է՝ արժանապատվության պակասը և ժամանակակից աշխարհի խաղի կանոններին չտիրապետելը»:

Ժամանակ, 2012, 7 ապրիլի

«Աղքատ մարդը ուրիշ ելք չունի, քան վաճառել այն, ինչ ունի: Աղքատ կանայք վաճառում են իրենց մարմինը, վաճառում են իրենց ծայրը»:

«Քաղաքական մշակույթ Հայաստանում գոյություն չունի: Սա իջեցնում է մեր ժողովրդի մակարդակը և գաճաճության դրոշմ է դնում ընտրական ողջ կամպանիայի վրա»:

Հայկական ժամանակ, 2012, 21 ապրիլ, թ. 73

«Ընտրությունը առանձին մարդկանց կոճակի, հետևաբար և իշխանության տիրապետելու գործընթաց է: Մեր հասարակությունը բավականին մեծ գին է վճարում այդ մարդկանց իղձը կատարելու համար՝ արտագաղթն է ավելանում, հասարակությունը չի կարողանում խաղաղ ձևով փոխել իշխանությունը, մարդիկ իրենց խղճին դեմ գործողություններ են անում, հասարակության ինստիտուտները քանդվում են: Անարդարությունը դառնում է համատարած, երկիրը պառակտվում է, մարդիկ իրար դեմ են դուրս գալիս, կա նաև հոգեբանական գին՝ այն հոռետեսությունը, որը մեզ պատել է, ժողովուրդն օտարվում է երկրից: Արտաքին քաղաքական գին էլ գոյություն ունի՝ երկրի ճակատագրի գինը»:

Ժամանակ, 2012, 19 ապրիլի

«Ընդդիմությունն է, որ պետք է գտնի սոցիալական համախմբման առանցքն ու արժեքային բանալին: Ընդդիմության խնդիրն է՝ նաև հասարակությանը տանել հաղթանակից հաղթանակ՝ թույլ չտալով, որ հասարակությունն ընկնի հիասթափությունների և սոցիալական դեպրեսիայի մեջ»:

168 ժամ, 2012, 17-19 նոյ., թ. 112

«Հասարակությունն այսօր ադապտացիայի է ենթարկվել, և չինովմիկը պիտի հասկանա, որ հին մեթոդոլոգիան էլ չի աշխատում: Սա է: Եվ ես ազգի մակարդակի անալիզ չեմ անում, ես քաղաքացու մակարդակի անալիզ եմ անում: Եթե մեր քիթը երկար է, սա չի նշանակում, թե մենք ամեն բանի պիտի ազգային երանգ տանք: Մենք արդեն

քաղաքացիներ ունենք: Իսկ քաղաքացիական հասունությունը արդիականացման թերևս ամենակարևոր բաղադրիչն է»:

Թերթ.am, 2013, 12 օգոստոսի

«... Պետք է ձերբազատվենք մեր միջերից ու հասկանանք մի պարզ բան՝ ձրի պանիրը միայն մկան թակարդում է լինում: Մենք վերջապես պիտի գիտակցենք, որ Ռուսաստանը չի կարող մեզ պաշտպանել, որովհետև Ռուսաստանն ինքը պաշտպանության կարիք ունի, նրա վրա հիմա չորս կողմից հարվածներ են տեղում: Եվ եթե մենք ուզում ենք ունենալ մեծ եղբայր կամ ռազմավարական գործընկեր, պիտի պատրաստ լինենք Ռուսաստանին ուղղված հարվածները կրելունակ մեզ վրա: Ես գտնում եմ, որ մենք պիտի դադարենք մտածել, որ ռուսները մեր փրկիչներն են»:

norkhosq.net, 2015, 30 հունվ.

Պարբերականների ցանկ
Список периодических изданий
List of periodicals

1. **Առաջաստ** – Կանանց շաբաթաթերթ, Եր. - 1991 (թ. 1), (թ. 2), (թ. 5)
2. **Առավոտ** – օրաթերթ, Եր. - 1998 (21 մարտի), 2001 (6 դեկտ.), 2007 (21 դեկտ.), 2012 (5 դեկտ.)
3. **Ավանգարդ** – Հայաստանի երիտ. միութ. պաշտոնաթերթ, Եր. - 1991 (4 հուլ.)
4. **Բանբեր Երևանի համալսարանի = Вестник Ереван. ун-та = Bulletin of Erevan University** – հաս. գիտ. քառամսյա հանդես, ԵՊՀ. - 2010 (թ. 130.5), 2011 (թ. 133.5)
5. **Գարուն** – գրկ.-գեղ., հաս.-քաղ. անկախ ամսագիր, Եր. - 1969 (թ. 4), 1993 (թ. 1)
6. **Գրական թերթ** – Հայաստանի գրողների միութ. պաշտոնաթերթ, Եր. - 1988 (23 օգոստ.)
7. **Դպրություն** – շաբաթաթերթ, Եր. - 1990 (1 մայ.)
8. **Երեկոյան Երևան** – օրաթերթ, ՀԿԿ Երքաղկոմի օրգ., Եր. - 1992 (10 հունիսի)
9. **Երևանի համալսարան** – ԵՊՀ շաբաթաթերթ, Եր. - 1987 (թ. 2), 1989 (թ. 1)
10. **Ժամանակ** – «Սկիզբ Մեդիա կենտրոնի» օրաթերթ, Եր. - 1999 (10 ապր.), 1999 (14 մայ.), 2009 (1 հոկտ.), 2011 (26 հունվ.), 2011 (26 մարտի), 2011 (11 հնս.), 2011 (21 սեպտ.), 2012 (1 փետրվ.), 2012 (7 ապր.), 2012 (19 ապր.), 2012 (9 մայ.), 2012 (19 հնս.), 2013 (21 մարտի)
11. **Ժողովուրդ = armlur.am** – օրաթերթ, Եր. - 2011 (թ.89)
12. **Իրավունք** – «Սահմանադրական իրավունք» միութ. պաշտոնաթերթ, Եր. - 1996 (թ. 37)
13. **Լենինյան ուղիով.** – տես.-քաղ. ամսագիր: ՀԿԿ Կենտկոմի օրգ. - 1973 (2)
14. **Խորհրդային Հայաստան = Սովետական Հայաստան** – օրաթերթ, ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների խորհրդի օրգան. - 1977 (24 մայ.), 1989 (6 հոկտ.), 1990 (1 փետրվ.)
15. **Կանայք հայոց** – ամսագիր, Եր. - 1994 (թ.1-2), 2000-2005
16. **Կուսակցական խոսք** – журнал, Ер. - 1980 (№ 13)
17. **Հայաստան** – 1991 (7 մայ.), 1991 (8 հնս.), 2001 (21 սեպտ.)
18. **Հայաստանի ժողովրդական տնտեսություն = Айастани жоговрдакан тнтесутюн** – տեսական և գիտապրակտիկ ամսագիր, Եր. - 1968 (№ 6), 1969 № 6), 1974 (№ 8), 1978 № 1), 1978 (№ 10)
19. **Հայաստանի Հանրապետություն** – օրաթերթ, Եր. - 1991 (2 մարտի), 1999 (14 մայ.)
20. **Հայկական ժամանակ** – անկախ օրաթերթ, Եր. - 2012 (21 ապր.)
21. **Հայոց աշխարհ** – օրաթերթ, Եր. - 1998 (12 փետրվ.), 1998 (17 փետրվ.), 1999 (4 մարտի), 1999 (6 ապր.), 1999 (14 մայ.), 2000 (4 հոկտ.), 2002 (31 օգոստ.), 2003 (16 ապր.), 2003 (8 նոյեմբ.), 2003 (26 նոյեմբ.)

22. **Հայություն** – 1992 (թ. 8–10)
23. **Հայք** – օրաթերթ, Եր. – 2007 (18 մայ.)
24. **168 ժամ** – թերթ, Եր. – 2009 (թ. 99), 2011 (թ. 57), 2012 (թ. 82), 2012 (թ. 112)
25. **Միտք** – օրաթերթ, Եր. – 1990 (23 դեկտ.)
26. **Նոյյան Տապան = Ноян Таран**– լրատվ. կենտրոն, Եր. – 2002 (№ 418)
27. **TV Միլ** – շաբաթաթերթ, Եր. – 2007 (թ. 26)
28. **Փիլիսոփայության հարցեր** – գիտ. աշխ. միջրուհ. ժող., ԵՊՀ. – 1989 (Պր. 8)
29. **Փոփոխվող հասարակություն = Изменяющееся общество** – ամսագիր. – 1996 (թ. 1), 1997 (թ. 1-2), 1998 (թ. 1-2), 2001 (թ. 1-2), 2002 (թ. 1-2)
30. **Օրեր** – եվրոպական անկախ ամսագիր, Պրահա. – 2007 (թ. 2)
31. **Армянский вестник** – ежемес. газета Моск. арм. культ. общества (МАКО), Москва. – 1990 (№3/5)
32. **Вопросы философии** – советский и российский науч.-теорет. филос. журнал, АН СССР, Москва. –1983 (№ 10)
33. **Голос Армении** – газета, Եր. – 2011 (1 ноября)
34. **Демография и социология** – науч. журнал, РАН, Москва. – 1994 (вып. 11)
35. **Ежегодник** – журнал, экон. фак. ЕГУ. – 2011, 2012
36. **Известия** (Советов народ. депутатов СССР) – ежендн. газета, Москва. – 1989 (№150)
37. **Кавказ = The Caucasus** – Ежегодник Кавказского ин-та, Եր. – 2006
38. **Коммунист** – республ. газета Арм.ССР на рус. яз., Եր. – 1988 (23 янв.)
39. **Новое время** – независ. общественно-полит. газета, Եր. – 1991 (декабрь), 1997 (29 ноября), 2002 (10 июля), 2007 (22 мая), 2007 (524 сент.)
40. **Республика Армения** – общественно-полит. газета, Եր. – 1992 (февр.)
41. **Социалистическая индустрия** – газета ЦК КПСС, Москва. – 1987 (№ 143)
42. **Урарту** – еженед. газета, Եր. – 1992 (№ 22, № 25), 1993 (№ 11)
43. **The Armenian Observer** – newspaper, Hollywood, USA. – 1990 (June 27)
44. **Hay Geen** – Los Angeles, USA. – 2012 (Oktober)
45. **Journal of Immigrant and refugee services** – Academic journal, Haworth Social Work Practice press, Philadelphia, Pennsylvania. – 2004 (V.2.- № 1/2)
46. **Soviet life = Совет лайф** – Embassy of the USSR in the USA, Washington. – 1987 (№ 12)
47. **Women's studies** – Gordon and Breach Science Publishers, New York. – 1988
48. **1in.am** – 2011 (2 մայ.)
49. **Elq.am** – 2014 (5 մարտի)
50. **hayeli.am** – 2013 (9 սեպտ.), 2016 (5 օգոստ.)
51. **mamul.am** – 2016 (17 օգոստ.)
52. **norkhosq.net** – 2015 (30 հունվ.)
53. **tert.am** – 2013 (12 օգոստ.)

Հապավումներ **Сокращения = Abbreviations**

- ԱՀՌԾ [СППБ=PRSP]** – Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄՆ [CША=USA] – Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ [CHГ=CIS] – Անկախ պետությունների համագործակցություն
ԵՊՀ [ЕГУ=YSU] – Երևանի պետական համալսարան
ԻՆՏԱՍ [INTAS] – Նախկին ԽՍՀՄ նորանկախ պետությունների գիտնական-ների հետ համագործակցության միջազգային միավորում
ԼՂՀ [RNK=HKP] – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԽՍՀՎ [ՍՄԿՎ] – Խորհրդային [Սովետական] Միության Կոմունիստական Կուսակցություն
ԽՍՀՄ [ՍՍՀՄ=СССР=USSR] – Խորհրդային [Սովետական] Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՀԱՀ [АУА] – Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ [RA=PA] – Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ [ООН=UN] – Միավորված ազգերի կազմակերպություն
ՄՄԿ [МОМ=IOM] – Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՅՈՒՆԵՍԿՕ [UNESCO] – Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
ՌԴ [РФ=RF] – Ռուսաստանի Դաշնություն
ՍՍՀՄ [USSR=СССР] – Սովետական Սոցիալիստական Հանրապետություն-ների Միություն
АН Арм. ССР – Академия наук Армянской Советской Социалистической Республики
АСПР [ASPR] – Американское общество психических исследований
ЕГУ [ԵՊՀ=YSU] – Ереванский государственный университет
ИПК МГУ – Институт повышения квалификации Московского государственного университета
ИССБ – Имплементация стратегии сокращения бедности
КИ – Кавказский институт
МОМ [ՄՄԿ=IOM] – Международная организация по миграции
МОН РА – Министерство образования и науки Республики Армения
HKP [ԼՂՀ=RNK] – Нагорно-Карабахская Республика
ООН [ՄԱԿ=UN] – Организация Объединенных Наций
РА [ՀՀ=RA] – Республика Армения
РАН [RAS] – Российская академия наук
РФ [ՌԴ=RF] – Российская Федерация
СМИ – Средства массовой информации
СНГ [ԱՊՀ=CIS] – Содружество Независимых Государств
ССА – Советская социологическая ассоциация

СППБ [ԱՀՌԾ=PRSP] – Стратегическая программа преодоления бедности
СССР [ՍՍՀՄ=USSR]– Союз Советских Социалистических Республик
США [ԱՄՆ=USA] – Соединённые Штаты Америки
ЦК КП Армении – Центральный комитет коммунистической партии Армении
ЦМИ – Центр миграционных исследований
ASPR – American Society for Psychical Research
AUA [ՀԱՀ]– American University of Armenia
CEDAW – Committee on the Elimination of Discrimination against Women
 [Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե]
CIS [ԱՊՀ=СНГ] – Commonwealth of Independent states
CNRS – Centre national de la recherche scientifique [Գիտական հետազոտությունների ազգային կենտրոն]
CRICR – Centre regional integration and conflict resolution (Տարածաշրջանային ինտեգրացիայի և կոնֆլիկտների լուծման կենտրոն)
INED – Institut national d'études démographiques [Ժողովրդագրական հետազոտությունների ազգային ին-տ]
INTAS – The International Association for the Promotion of Co-operation with Scientists from the New Independent States of the Former Soviet Union
IOM [MOM=ՄՄԿ] – International Organization for Migration
NGO – Non-governmental organization [Неправительственная организация]
NIS – Newly Independent States [Նորանկախ պետություններ]
PRSP [ԱՀՌԾ=ИССБ] – Poverty Reduction Strategy Program
RA [ՀՀ=РА] – Republic of Armenia
RAS [РАН] – Russian Academy of science
RF [РФ=ՌԴ] – Russian Federation
RNK [ՀԿՔ=LՂՀ] – Republic of Nagorniy Karabakh
SCAS – Swedish Collegium for Advanced Study [Шведский коллeгиум перспективных исследований]
UN [ՄԱԿ=ООН] – United Nations
UNESCO – United Nations Educational, Scientific and Cultural Organization
URMIS – L'Unité de Recherche Migrations et Société [Միգրացիայի և հասարակության հետազոտության միավորում]
USA [США=ԱՄՆ] – United States of America
USAID – United States Agency for International Development [Միջազգային զարգացման ԱՄՆ գործակալություն]
USSR [СССР=ՍՍՀՄ] – Union of Soviet Socialist Republics
YSU [ԷԳՄ=ԵՊՀ] – Yerevan State University

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

СОДЕРЖАНИЕ = CONTENTS

Լյուդմիլա Հակոբի Հարությունյան.

Լյանքի և գործունեության հիմնական տարեթվերը	5
Людмила Арутюнян: основные даты жизни и деятельности	7
Lyudmila Hakob Harutyunyan: life and activity dates	9
Հանրայնագետ մտավորականը [կենսագրական ակնարկ]	11
Общественный интеллект [биографический очерк]	17
The public intellectual [biographical sketch]	22

Լ. Հ. Հարությունյանի աշխատանքների Ժամանակագրական ցանկ

Хронологический указатель трудов Л. А. Арутюнян
Chronological index of L. H. Harutyunyan's works

Մենագրություններ, գիտ. հոդվածներ, գեկուցումներ	26
Монографии, научные статьи, доклады = Monographs, scientific articles, reports	
Խորհրդային շրջան (1968–1991).....	26
Советский период = The Soviet period	
Հետխորհրդային շրջան	32
Постсоветский период = The post-Soviet period	
Խմբագրած նյութեր	42
Редактированные материалы = Edited materials	
Ծրագրեր և սոցիոլոգիական հետազոտություններ	44
Социологические исследования = Sociological studies	
Հրապարակախոսական հոդվածներ և հարցազրույցներ	48
Публицистические статьи и интервью	
Publicistic articles and interviews	
Լ. Հ. Հարությունյանի մասին	54
о Л. Арутюнян - about L. Harutyunyan	

**Քաղվածքներ Լ. Հ. Հարությունյանի
հրապարակումներից**
Экстракты из публикаций Л. А. Арутюнян
Excerpts from L. H. Harutyunyan's publications

Հարյուր տարի անց. Մեծ Եղեռնի ճանաչման հեռանկարները59

Сто лет спустя: перспективы признания Геноцида армян

A hundred years later: perspectives of recognition of Armenian Genocide

Новые перипетии армянской миграции: кумулятивная

причинность и возможные последствия 72

Հայկական միգրացիայի նոր վայրիվերումները. ամբողջական

պատճառները և հնարավոր հետևանքները

New twists of Armenian migration: accumulative causation and the possible
consequences

Հարցազրույցներ պրոֆ. Լ. Հ. Հարությունյանի հետ

Интервью с проф. Л. А. Арутюнян = Interview with Prof. L. H. Harutyunyan

Մեզ հույսը կորցնելու իրավունք չի տրված

[ինքնակենսագրականի փոխարեն] 92

Нам не дано права потерять надежду [вместо автобиографии]

Հայերը ցանցային ազգ են, բայց մեր պետությունը ցանցային

պետություն չէ99

Армяне – сетевая нация, но наше государство не является сетевым
государством

Հայաստանին պետք է ոչ թե դեմքերի փոփոխություն, այլ նոր

լուծումներ 103

Армении нужна не смена лиц, а новые решения

Պետք է չեղյալ համարել մոսկովյան բոլոր պայմանագրերը107

Не плакать, не смеяться, не ненавидеть, но понять

Լ. Հ. Հարությունյանի մտքերից 108

Из мыслей проф. Л. Арутюнян

Պարբերականների ցանկ 116

Список периодических изданий = List of periodicals

Հապավումներ 118

Сокращения = Abbreviations

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ս. ԵՎ Մ. ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ԼՅՈՒԴՄԻԼԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի**

**Տպագրված է ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի
Հրատարակչական մասի տպարանում:
ք. Երևան Ահարոնյան 12/3**

**Ստորագրված է տպագրության՝ 12.09.2017:
Չափսը՝ 60x84^{1/16}: Տպ. մամուլը՝ 7,625:
Տպաքանակը՝ 100:**

**ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am**